Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018Թ.
№ 32 (490)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

**Աստուած բազումողորմ,
Խնայեա յարարածս քո,
Հայր ամենակալ եւ ողորմեա՛:**

**Արեգակն արդարութեան
Ծագեա ի հոգիս մեր
զԼոյս ճշմարտութեան եւ
ողորմեա՛:**

**Տուր մեզ, Տէր, զխաղաղութիւն,
Եվ փրկեա ի նեղչաց մերոց,
Հոգիդ ճշմարտութեան, եւ
ողորմեա՛:**

Մեսրոպ Մաշտոց

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տեր Մակար Վարդապետ Հակոբյանի շնորհավորական ուղերձն Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Սիրելի՛ սյունեցիներ, հավատացյալ ժողովուրդ, եղբայրներ եւ քույրեր

Մեզ բարիքներ պարգեւող Աստված կրկին հնարավորություն է ընձեռում՝ դիմավորելու Նոր տարվա գալուստը՝ իր միածին որդու Սուրբ ծննդյան ավետիսով: Այդ ավետիսով է, որ բոլորիս սրտերը լցվում են նոր հույսերով ու սպասումներով:

Հիրավի, ավետիս է բոլոր ազգերի եւ բոլոր ժամանակների համար, քանզի ծնվեց մեր Փրկիչը՝ ցույց տալու համայն մարդկությանը ինչպես հավիտենական կյանք տանող ճանապարհը, այնպես էլ երկրի վրա մարդկանց խաղաղ համակեցության եւ փոխադարձ հաճության ուղին: 2018 թվականին տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, որ մենք պետք է էլ ավելի ամուր զրահավորվենք մեր հավատքի լույսով եւ Սուրբ ծննդյան երկնային պատգամն օգտագործելով՝ 2019 թվականը դիմավորենք եւ շարունակենք անձանձրույթ աղոթքով ու գործով, որ երկրի վրա տեւապես թագավորեն փոխադարձ սերն ու հանդուրժողականությունը, բարի կամեցողությունն ու խաղաղ համագործակցումը:

Նոր տարվա շեմին այս խոհերով լցված՝ մեր հավատացյալ ժողովրդին մաղթում եմ ազատ ճանապարհ նոր կյանքի համար՝ աղոթելով, որ Աստվածորդին լուսավորի անվտանգության ու բարօրության մեր երազանքը:

Թող հրաշալի Սուրբ ծննդյան շնորհներն առատապես իջնեն աշխարհի եւ մեր երկրի վրա, եւ Քրիստոսի սերը լուսավորի ամբողջ մարդկության կյանքն ու ջերմացնի նրանց սրտերը:

Բացենք դռները 2019 թվականի առջեւ եւ հույսով լցված առաջ ընթանանք:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

**Օրհնությամբ՝
Տեր Մակար վրդ. Հակոբյան**

Միսաք Մեծարենց

Նոր տարին

Այս գիշեր հագված, սըգված Նոր տարին
Առտվան լույսին կը սպասե տենդոտ.
Ոգիներ անդարձ կորզեցին, տարի՜ն
Մեր գրկեն հինին ձայները ծանոթ:

Նոր տարվա ընծա պայծառ լուսինկան
Սազեր է գյուղին լեռները բոլոր.
Երգերը ծերին, ճիչերը մանկան
Կ'արձագանգեն թունդ խազերով մոլոր:

Իղձերու շարք մը պլլված սրտին՝
Վառ հույզերու մեջ կ'օրրե զայն ուժգին.
Բորբոքած հուրքովն հույզերու անշեջ
Կը ծփան սիրտերն ըղձանքներու մեջ:

Գիշերվան վերջին պահերուն լըռին
Ձայներն ու լույսեր հանկարծ կը մարին.
Եվ բեհեզներովն կապույտ կամարին
Պճնըված աշխարհ կուգա Նոր տարին:

«Սյունյաց երկիրը» Արցախի պաշտպանության առաջնագծում էր

Տասնհինգամյա «Սյունյաց երկիրն» ունի ավանդույթներ, որոնք շարունակում են մնալ կենսունակ:

Առաջինը, այդ առումով, կապն է Արցախի պաշտպանության առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող զինվորականների հետ:

Դեկտեմբերի 20-ին պարբերաթերթի ստեղծագործական խումբը կրկին Արցախի Հանրապետությունում էր (Սամվել Ալեքսանյան, Ալվարդ Մեսրոպյան, Սուսաննա Բաբաջանյան):

Լրագրողները Պաշտպանության բանակի ներկայացուցչի՝ կապիտան Գեղամ Գրիգորյանի ուղեկցությամբ եղել են Արցախի պաշտպանության հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկում, ինչպես եւ առաջնագծի մարտական դիրքերում, զրույցներ ունեցել դիվիզիայի հրամանատար, գնդապետ Կարեն Շաքարյանի, ինչպես եւ հերթապահող զինվորների հետ:

Օրվա վերջում լրագրողները հյուրընկալվել են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունում:

«Սյունյաց երկիր»

Մեր ժամանակների հերոսը մարտական դիրքերում հերթապահող զինվորն է, Արցախյան գոյակռվի նահապակն ու մասնակիցը

Հնարավոր չէ այցելել Արցախի պաշտպանության հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված այդ զորամաս ու հպարտություն չապրել, չզորանալ, վաղվա հանդեպ հավատով ու լավատեսությամբ չլցվել վերստին:

Նաեւ այդ զորամասն է 2016-ի ապրիլի լույս 2-ի գիշերը մարտական դիրքերում իր վրա կրել Ադրբեջանի կանոնավոր զորքերի հանկարծակի գրոհը:

Ու հարձակման հանկարծակիությունը ոչ միայն մեր դիրքերում խուճապ չի առաջացրել, ոչ միայն դիրքերից նահանջելու չի մղել, այլեւ…

Անձնազոհության պատրաստ զինվորները հերոսաբար պաշտպանել են իրենց մարտական դիրքերը եւ կասեցրել ադրբեջանցիների գրոհն ու հօդս ցնդեցրել առաջխաղացման ցնորական ծրագիրը:

Չորս օր տեւած կենաց-մահու մարտերում, սակայն, մեր զինվորներից շատերը մարտիրոսվեցին՝ **Ռոբերտ Աբաջյան, Քյարամ Սլոյան, Արմենակ Ուրֆանյան, Անդրանիկ Զոհրաբյան…**

Եվ զորամասի տարածք մտնող յուրաքանչյուրին ընդառաջ են գալիս Հայաստանի Հանրապետության եւ Արցախի հերոսների դիմանկարները. **այլեւս ու ընդմիշտ նրանց թվում է Ռոբերտ Աբաջյանը…**

Այդ զորամասի նահատակների կերպարները ոգեշնչման աղբյուր են Արցախի սահմանների մերօրյա պաշտպանների համար, ինչի բազմաթիվ դրսեւորումների ականատեսը եղանք մեր այցելության ընթացքում:

Եվ կարող ենք ամենայն հստակությամբ

Կարեն Շաքարյան, գնդապետ, դիվիզիայի հրամանատար

էջ 3

Խոսք Նոր տարվա եւ Սուրբ Ծննդի առիթով

Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյան

Սիրելի՛ սյունեցիներ

Ջերմորեն շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ:

Ամենքիս համար ամենաբարի, լուսավոր ու ընտանեկան ջերմություն բերող տոնն է Նոր տարին, իսկ նրա մուտքն ավետող ղողանջների հրաշքին սպասում ենք բոլորս՝ անկախ տարիքից: Չէ՞ որ այս տոնի հետ են կապվում մեր նոր նպատակներն ու իղձերը եւ դրանք իրականություն դարձնելու հույսերը, որոնց իրավունքը վաստակում ենք սեփական համառ աշխատանքով:

2019 թվականին բոլորիդ մաղթում եմ բազում հաջողություններ, առողջություն, բարեկեցություն, հայոց սահմաններին՝ խաղաղություն:

Տարին ճանապարհելու եւ նորին սպասելու սահմանագծին, ամփոփելով 2018-ը, պետք է նշենք, որ այն բեկումնային էր ու հիշարժան, ինչպես ողջ հանրապետության, այնպես էլ Սյունիքի մարզի համար: Մի քանի ամսվա ընթացքում անցանք քաղաքական տարբեր շրջափուլերով, վառեցինք նոր Հայաստան կառուցելու լույսը, օրինական ու ազատ ընտրություններով հիմք դրեցինք նոր պետականաշինության, որը պետք է իրագործենք գալիք 2019-ին եւ հաջորդ տարիներին:

Ուստի առջեւում առավել պատասխանատու եւ կարեւոր անելիքներն են, որոնցում ամենքս պետք է ներդնենք մեր ջանքն ու եռանդը՝ հանուն առավել կայուն, ապահով ու զարգացման անշրջելի ընթացք ունեցող Հայաստանի:

Իսկ այդ ամենում Սյունիքն ունի պատմականորեն քանիցս ապացուցված իր անառարկելի դերը, ներդրումն ու առաքելությունը, որը պետք է շարունակենք մենք՝ նոր իրողություններում ձեւավորված թիմով, որն ավելի վստահորեն է նայում ապագային եւ ունի փոփոխություններ կատարելու, երկիրը շենացնելու կամք:

Թո՛ղ գալիք տարվա յուրաքանչյուր օրն իր հետ բերի նոր հնարավորություններ, որ կարողանանք միավորել մեր բոլոր ուժերը՝ ի նպաստ Սյունիքի ներկա մարտահրավերների դիմակայման, խնդիրների լուծման, սյունեցիների հոգսերի թեթեւացման:

Սիրելի՛ հայրենակիցներ, եւս մեկ անգամ շնորհավորելով ձեր Ամանորը՝ մաղթում եմ, որ հին տարին իր հետ տանի բոլոր դժվարություններն ու հոգսերը, իսկ Նոր տարում իրականություն դառնան յուրաքանչյուրիդ հույսերն ու սպասումները:

Թո՛ղ միշտ բոլորիդ կողքին լինեն հարազատներն ու բարեկամները,հավատարիմ ընկերները:

Թո՛ղ բոլորիդ օջախներում տիրի խինդն ու երջանկությունը:

Շնորհավո՛ր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյան

Ջերմորեն շնորհավորում եմ տարվա ամենասպասված եւ ամենասիրված տոնի՝ Նոր տարվա եւ Սուրբ ծննդյան առթիվ:

Ամանորն առաջին հերթին ընտանեկան տոն է, եւ թո՛ղ որ գալիք 2019 թվականը դառնա ձեր ընտանիքների, նրա յուրաքանչյուր անդամի իղձերի, նոր ծրագրերի, նախաձեռնությունների իրականացման տարի:

Յուրաքանչյուր Ամանոր նոր մեկնարկի սկիզբ է ազդարարում եւ ցանկանում եմ, որ այդ մեկնարկը լինի բոլորիս համար հաջողակ ու հույսերով լի:

Թող որ գալիք տարին իրականություն դարձնի համայնքի զարգացմանն ու նրա բնակչության բարօրությանը միտված բոլոր նախաձեռնությունները: 2019 թվականի ծրագրերը բազում են, սպասելիքները՝ առավել եւս:

Վստահ եմ, որ միասնական ու համախմբված աշխատանքի շնորհիվ իրականանալու են մեր առջեւ դրված նպատակները, փորձելու ենք ըստ առաջնահերթության լուծում տալ բոլոր խնդիրներին:

Սիրելի՛ կապանցիներ

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել Ամանորի գիշերը մարտական հերթապահություն իրականացնող մեր զինվորներին՝ ցանկանալով նրանց զգոնություն, տոկունություն եւ խաղաղություն, ինչպես նաեւ բուժաշխատողներին, ոստիկաններին, փրկարարներին ու հրշեջներին եւ վերջապես նրանց, ովքեր մասնագիտական պարտականություններից ելնելով՝ Ամանորը դիմավորելու են ընտանիքից հեռու:

Թո՛ղ Նոր տարին երջանկություն, սեր ու համերաշխություն պարգեւի բոլորին: Թո՛ղ որ անցնող տարում մնան բոլոր հոգսերն ու դժվարությունները, եւ բոլորս միասին, լավատեսությամբ մտնենք նոր տարի:

Թո՛ղ 2019-ը լինի առաջընթացի տարի եւ առատություն ու բարօրություն բերի մեր ընտանիքներին:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

ՀՀ զինված ուժերի 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Ժիրայր Պողոսյան

Սիրելի սյունեցիներ

1-ին բանակային զորամիավորման տարեգրությունը հարստացավ եւս մեկ տարով:

Արժեւորվելով անցած տարին, կարող եմ հպարտությամբ ասել, որ զորամիավորման ենթակա ստորաբաժանումները հաջողությամբ կատարեցին 2018 թվականին իրենց առջեւ դրված խնդիրները, որոնք ցույց են տրվել տարբեր զորավարժությունների եւ մարզումների ժամանակ, ինչին, անշուշտ, ականատես է եղել միշտ մեր կողքին կանգնած ու աջակցությունը ցուցաբերած սյունեցին:

Շուտով կմեկնարկի 2019 թվականը, շնորհավորում եմ բոլորիս՝ զինվորին եւ սյունեցուն՝ Ամանորի եւ Սուրբ ծննդի կապակցությամբ, մաղթում եմ քաջառողջություն, խաղաղության պայմաններում արարում, անփորձանք ծառայություն եւ ընտանեկան երջանկություն:

Համոզված եմ, որ նոր տարվա ընթացքում նույնպես Սյունիքում ծառայող զինվորն ու ապրող քաղաքացին համատեղ կկատարեն իրենց առջեւ դրված խնդիրները:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

ՀՀ զինված ուժերի 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Վալերի Քոչարյան

Իմ սիրելի հայրենակիցներ

Ավարտին է մոտենում 2018 թվականը, տարի, որը լի էր բարեփոխումներով, վերելքներով ու առաջընթացով: Հայ ժողովուրդը վստահ շարունակեց անվարան քայլերով առաջընթացը:

Այդ համատեքստում անգնահատելի է զինված ուժերի դերակատարությունը Հայաստանի Հանրապետության սահմանների անձեռնմխելիության բնագավառում: Զինված ուժերի կայացման գործում իրենց ավանդն ունեն զորամասերում ծառայություն իրականացնող, ինչպես նաեւ նախկինում ծառայած բազմաթիվ սպաներ, ենթասպաներ, պայմանագրային ու ժամկետային զինծառայողներ, բանվոր-ծառայողներ: Նրանք՝ հաստատուն նպատակադրումով, յուրաքանչյուրն ամենօրյա ծառայողական պարտականությունների հստակ կատարումով մի նոր թափ է հաղորդում հայ ժողովրդի ապահով ապրելու եւ ապրելու անխախտ գործընթացին:

Բարեխիղճ ծառայության, բարձր մարտական պատրաստության, զինվորական կարգապահության համար մեծաթիվ զինծառայողներ պարգեւատրվել են պետական եւ գերատեսչական մեդալներով, պատվոգրերով ու կրծքանշաններով, շնորհակալական նամակներով:

Ամենօրյա ծառայողական գործունեությունը, զորավարժությունները ցույց են տալիս, որ զորամասերը մարտունակ են եւ պատրաստ կատարելու յուրաքանչյուր առաջադրանք՝ պայմանավորված անձնակազմի պատրաստվածության, արագ գործելու ունակության, անտրտունջ կերպով վստահված սահմանի ամրացման եւ զինվորական կարգապահության գործընթացներով:

Այդ ամենով ավելի անթակտելի է կապը ժողովրդի եւ իր ծոցից ծնված բանակի միջեւ, այսօրվա արտաքին մարտահրավերների մթնոլորտում անհնար է պատկերացնել անգամ հայ ազգն առանց բանակի եւ բանակն առանց աներեր հենարան՝ հայ ժողովրդի, ուստի Հայոց աշխարհի հպարտ քաղաքացիներին անձամբ իմ եւ բանակային կորպուսի ողջ անձնակազմի անունից մաղթում եմ նոր ձեռքբերումների, հայրենիքին անմնացորդ նվիրվածության տարի, իսկ զեզ իմ հարգելի զինակից ընկերներ, ցանկանում եմ, որ հզոր ոգով, ամուր կամքով մշտական խաղաղություն պարտադրեք թշնամուն, նոր տարին թող լինի զինվորական պարտքին ու մարտական ավանդույթներին հավատարմության եւ զորական ընկերակցության էլ ավելի ամրապնդման տարի՝ ի շահ հայ ժողովրդի մշտական բարեկեցության:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

Սյունիքի զինվորական կոմիսար, գնդապետ Արարատ Մանուչարյան

Անցնող տարին բանակաշինության կյանքում նշանավորվեց նրանով, որ նախկին չորս վարչական շրջանների՝ Կապանի, Գորիսի, Սիսիանի եւ Մեղրու զինկոմիսարիատները միավորվեցին եւ ստեղծվեց նոր կառույց՝ Սյունիքի զինկոմիսարիատ՝ նոր պահանջներով ու խնդիրներով:

Պաշտպանության նախարարությունում նպատակահարմար գտան, որ ինքս ղեկավարեմ նորաստեղծ կառույցը՝ հավանաբար նկատի ունենալով մարտական փորձս եւ ծառայությունս նախարարության օպերատիվ վարչությունում:

Այժմ նոր ոլորտում պատասխանատու շրջան է՝ ծննդյան տոներից հետո մեկնարկելու է 2019 թվականի ձմեռային զորակոչը, որին Սյունիքի զինկոմիսարիատը հավուր պատշաճի նախապատրաստվել է:

Իսկ մինչ այդ ամփոփում ենք անցնող տարվա արդյունքները, նախանշում անելիքները:

Կարծում եմ՝ նաեւ պատեհ առիթ է՝ բարեմաղթանքներ հնչեցնելու Ամանորի եւ Սուրբ ծննդի առթիվ:

Շնորհավորում եմ աշխարհասփյուռ հայության Ամանորը եւ Սուրբ ծնունդը, թող բոլորիս հպարտությունը՝ Հայոց բանակը լինի մարտական, հզոր եւ ուժեղ, վստահորեն իրականացնի երկրի սահմանների պաշտպանությունը՝ հանուն հայ ընտանիքների անվտանգության ու բարեկեցության եւ հայ մանուկների խաղաղ ու անամպ երկրի:

Բարեմաղթանքներ եմ ուղղում առաջնագծի դիրքապահ զինվորներին ու սպաներին, ովքեր նոր տարվա կեսգիշերին, երբ Ամանորի զանգերի ղողանջներն ավետելու են 2019-ի մեկնարկը, լինելու են հայրենիքի սահմանների պաշտպանության մարտական դիրքերում՝ խրամատներում: Նրանց անփորձանք ծառայություն եւ մարտական ոգի եմ մաղթում:

Շնորհավորանքներս եմ հղում Արցախյան հերոսամարտում զոհված եւ վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, նրանց հաջողություն եւ արեւշատություն մաղթում, նույնը՝ մերօրյա պատերազմի վետերաններին: Միշտ վստահ եմ, որ մերօրյա պատերազմի քուրայով անցած մարտիկներն անհրաժեշտության դեպքում, ինչպես Ապրիլյան պատերազմի ժամանակ, զենքը ձեռքին կկանգնեն երիտասարդ զինվորների կողքին՝ պաշտպանելու Հայոց աշխարհի սահմանները:

2019 թվականին բանակ զորակոչված երիտասարդներին ցանկանում եմ լինեն խաղաղ օրերի զինվորներ: Բարով ծառայեն եւ անվնաս վերադառնան հայրենի օջախները:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

Մեր ժամանակների հերոսը մարտական դիրքերում հերթապահող զինվորն է, Արցախյան գոյակռվի նահատակն ու մասնակիցը

էջ 1

արձանագրել՝ նրանց կերպարը, նրանց ոգեղեն ներկայությունն ուղեկցելու են մեզ հավերժ…

***

Դեկտեմբերի 20-ին Արցախի պաշտպանության առաջնագիծ կատարած հերթական այցելության ժամանակ ստացած տպավորությունների մասին կարելի է երկար պատմություններ անել՝ օրեցօր ամրացվող եւ արդիականացվող դիրքերից, փոս-ճանապարհների աներեւակայելի ցանցից, արդիական զենքից ու սարքավորումներից մինչեւ զինվորի սնունդ, զինվորի հագուստ, մինչեւ մարտական դիրքերում հերթապահող զինվորի տրամադրություն ու բոլորիս ոգեշնչող, գոտեպնդող ներկայություն, բայց…

Այս անգամ գերադասում ենք պատմել գնդապետ Կարեն Շաքարյանի մասին, ով արցախաադրբեջանական սահմանի մի մեծ հատվածը պաշտպանող զորական միավորման (դիվիզիայի) հրամանատարն է:

Մեր ստեղծագործական խումբը գնդապետ Աշոտ Աղաջանյանի զորամաս հասավ այն ժամանակ, երբ ե՛ւ շարքային, ե՛ւ սպայական անձնակազմը զորամասի մարտական պատրաստության ավանում էր:

Պատրաստվում էին հաջորդ օրը մարտական դիրքերում տեղի ունենալիք հերթափոխին:

Իսկ հերթափոխի գնալուց առաջ, որպես կանոն, զինվորները մարտական պատրաստության ավանում գործնական պարապմունքների ու վարժանքների են մասնակցում:

Դիվիզիայի հրամանատար Կարեն Շաքարյանը (իր ենթակա զորամասերից մեկում) անձամբ էր ղեկավարում այդ օրվա նախապատրաստական աշխատանքը:

Առաջնագծի մանրակերտի արտացոլանքով մարտական ավանում դիվիզիայի հրամանատարը, կարծեք, ձգտում էր շփվել դիրքեր մեկնելուն պատրաստվող ամեն մի զինվորի հետ, ուզում էր անձամբ համոզվել , թե զինվորն ինչպես կարող է կողմնորոշվել մարտական դիրքերում հավանական եւ անհավանական իրավիճակներում…

Կողքից մեզ հուշեցին, որ դիվիզիայի հրամանատարը «կաբինետային հրամանատարներից» չէ, շատ գործնական է եւ նրան անընդհատ կարելի է տեսնել ոչ միայն մարտական պատրաստության ավանում, այլեւ դիրքերում:

Պարզվում է՝ դա էլ պատահական չէ:

Արցախի հռչակավոր Ճարտար գյուղի զավակ Կարեն Շաքարյանը դեռեւս 18 տարեկանում է զինվորագրվել հայրենի երկրամասի պաշտպանության սրբազան գործին: Եվ քանիցս վիրավորվելուց հետո նույնիսկ հավատարիմ է մնացել իր կոչմանը, ու մինչեւ այսօր…

Երբ հրամանատարն ավարտեց իր գործը մարտական պատրաստության ավանում, մենք հնարավորություն ստացանք մոտենալ նրան եւ զրուցել:

Առաջին իսկ պահից անմիջական, շփվող մարդու տպավորություն թողեց: Այնպես որ՝ անկեղծ, անկաշկանդ զրույցը (հենց հրապարակում՝ ոտքի վրա) ստացվեց:

Մեր նախատեսած մի քանի հարց, սակայն, ստիպված էինք շրջանցել, քանի որ պատասխաններն արդեն իսկ հասցրել էինք տեսնել գործնականում:

Շրջանցեցինք նաեւ զինվորների ֆիզիկական դաստիարակությանն առնչվող հարցը:

Զորամասի տարածքում մարզական հիանալի ավանի ականատես եղանք՝ ժամանակակից հնարավորություններով եւ կահավորանքով:

Ասել է թե՝ անկարելի է մարզական այսպիսի հնարավորություններով զորամասում ծառայել ու ֆիզիկապես պատրաստ չլինել:

Զինվորների սննդին առնչվող հարցերին առավել համոզիչ պատասխան տալու համար հրամանատարի կարգադրությամբ բերվեցին պահածոյացված մի քանի սննդատեսակ:

Հրամանատարը հնարավորություն տվեց, մեր ցանկանալու դեպքում, այցելել սննդի պահեստարաններ կամ մեր հայեցողությամբ որեւէ մարտական դիրքում ճաշել զինվորների հետ, նաեւ այդ թեմայով զրուցել զինվորների, սպաների հետ ու սեփական կարծիք կազմել:

Մեր տպավորությունը (առաջին անգամ չէ, որ ասում ենք այդ մասին) հստակ է՝ հայոց բանակում զինվորը սննդի խնդիր այլեւս չունի:

Իսկ եթե զինվորի մայրը ժամանակ առ ժամանակ կամեցել է (կամենում է) իր պատրաստած ուտեստից որդուն բաժին հասցնել՝ դա արդեն այլ հարց է՝ սննդի անբավարարությամբ չպայմանավորված: Դա ավելի շատ ծնողական հոգատարության, կարոտի, գորովանքի արտահայտութուն է:

Զինվորների ճտքավոր կոշիկների (ճտքակոշիկների) որակի մասին մամուլում շրջանառվող տարակույսները եւս հրամանատարը փարատեց. **«Արդեն ստացել ենք նոր եւ լավորակ ճտքակոշիկների առաջին խմբաքանակը, եւ այդ հարցի վերջնական ու հիմնավոր լուծումը տեսանելի է»:**

Դիվիզիայի հրամանատար Կարեն Շաքարյանի հետ զրույցը, իսկապես, անկաշկանդ էր ու անկեղծ:

Ուստի եւ մեզ թույլ տվեցինք տեղափոխվել մտահոգությունների այլ ոլորտ:

-Պարոն գնդապետ, իմ զավակներին այսպես եմ դաստիարակել՝ մեր ժամանակների հերոսը մարտական դիրքերում հերթապահող զինվորն է, Արցախյան գոյակռվի նահատակն ու մասնակիցը: Ի՞նչ անել. թոռներիս նույնպե՞ս այդկերպ դաստիարակել,- հարցրեցինք դիվիզիայի հրամանատարին:

-Միայն այդպես,- պատասխանեց հրամանատարը:

Արցախյան պատերազմի տարիներին մարտական գործողությունների թատերաբեմ էր ամբողջ Սյունիքը: Մենք տեսել ենք ռմբահարված Կապան, Գորիս (մերձակա գյուղերով), իսկ Ապրիլյան պատերազմի օրերին կամավորականների առաջին գումարտակն Արցախ մեկնեց հենց Սյունիքից:

Այնպես որ՝ բոլոր հիմքերն ունենք հաստատելու՝ Արցախյան պատերազմն անկշռելի, անհամեմատելի ու անսակարկելի արժեք է, ինչպես Սարդարապատը:

Եվ ուրեմն՝ մեր արժեհամակարգում ինչպիսի վերածեւումներ էլ փորձեն կատարել, միեւնույն է՝ Արցախյան պատերազմը, Ապրիլյան պատերազմը Սյունիքում այլ ընկալում ունենալ չեն կարող:

Շատ լավ է, որ Արցախի պաշտպանության առաջնագծում կանգնած հրամանատարը նույնպես այդկերպ է մտածում եւ գործում…

Հատկապես Աժ ընտրության քարոզարշավի օրերին, նաեւ հաջորդող ժամանակաշրջանում, ցավոք, առանց կարիքի անհրաժեշտության, պատեհ թե անպատեհ, քաղաքական ուժերով եւ պատգամավորի թեկնածուներով արծարծեցինք Արցախյան հիմնախնդիրը, սահմանի իրավիճակը, միմյանց մեղադրեցինք դավաճանության, ուրացումի մեջ:

-Եվ ինչպե՞ս է այդ ամենին (ինչ-ինչ տարածքներ հանձնելու շուրջ ասեկոսեներին) վերաբերվում հրամանատարը,- հարցնում ենք գնդապետին:

-Մենք զինվորական ենք, սովորաբար նման հարցեր չենք քննարկում, բայց, խնդրեմ, հարցրեք սպային:

Այդ պահին, իսկապես, մի սպա էր անցնում մեր կողքով, եւ անակնկալորեն նույն հարցն ուղղեցինք նրան:

Իսկ նա.

-Նախ՝ ցանկալի չէ, որ յուրաքանչյուր ոք իրեն թույլ տա խոսել ու կարծիք հայտնել բավականին նուրբ եւ լուրջ այդ թեմայի շուրջ՝ նույնիսկ հեռավոր պատկերացում չունենալով խնդրի մասին:

Մյուս կողմից՝ այստեղ, ուր մենք կանգնած ենք, ամեն մի քայլի համար արյուն է հեղվել՝ մեր մարտական ընկերների արյունը… Ինչպե՞ս կարելի է այդքան թեթեւությամբ ու անհոգությամբ խոսել հողեր հանձնելու մասին…

Եվ, այդուհանդերձ, դիվիզիայի հրամանատարն իր դիրքորոշումն ունի՝ ապավինել նախեւառաջ ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Արցախի ղեկավարների ողջամտությանն ու խոհեմությանը, քանի որ իրենք լավագույնս են տիրապետում իրողություններին եւ պատկերացնում հնարավոր զարգացումներն ու դրանց հետեւանքները:

Գնդապետ Կարեն Շաքարյանը, ինչպես նշեցինք, 1990-ականներին է ընդգրկվել Արցախի ինքնապաշտպանությանը, տեղյակ է 1994-ի զինադադարին հաջորդած անցուդարձին:

Նրա համոզմամբ՝ ի սկզբանե խախտվել է ռազմատեխնիկական հավասարակշռությունը տարածաշրջանում. դա Խորհրդային Միության ժամանակներից եկող խնդիր է: Բայց եւ ցավ է ապրում, որ դաշնակից Ռուսաստանն այսօր էլ շարունակում է զենքի վաճառքն Ադրբեջանին, ինչը կարող է ավելի խորացնել ռազմատեխնիկական անհավասարակշռությունը:

Միեւնույն ժամանակ՝ նա չի կարծում, թե անցած երեք տասնամյակը, բանակի ռազմատեխնիկական հզորացման առումով, ոչ արդյունավետ է օգտագործվել:

Առանձնապես դրական է գնահատում Ապրիլյան պատերազմից հետո առաջնագծում կատարված (եւ ներկայումս շարունակվող) աշխատանքն ու առհասարակ բանակի արդիականացման ուղղությամբ կատարվող քայլերը:

Գնդապետն Արցախյան հիմնախնդրի կարգավորման ճանապարհին կարեւորում է մեր դիվանագետների աշխատանքը:

Դիվիզիայի հրամանատարն առանձնահատուկ նշանակություն է տալիս զինվորի բարոյահոգեբանական կերտվածքին, հայրենասիրական դաստիարակությանը:

Ըստ հրամանատարի՝ հենց զինվորի հայրենասիրական ոգու, կամքի ու վճռականության շնորհիվ կարողացանք 2016-ի ապրիլին հետ շպրտել հակառակորդին:

Նաեւ զինվորի ոգին է թույլ տալիս հրամանատարին՝ համոզված հայտարարելու, որ իր գլխավորած միավորումը պատրաստ է հետ մղելու հակառակորդի յուրաքանչյուր ոտնձգություն, պատրաստ է ապահովելու Արցախի պաշտպանական գծի անձեռնմխելիությունը:

Արցախաադրբեջանական սահմանագծի օպերատիվ իրավիճակը հրամանատարը գնահատում է կայուն եւ համեմատաբար հանգիստ, որը, սակայն, դիրքապահ մարտիկների զգոնությունը թուլացնելու պատճառ չի կարող լինել: Ընդհակառակը՝ Ամանորի եւ Սուրբ ծննդի օրերին առավել զգոնություն է պահանջվում:

Իսկ առհասարակ սահմանի անդորրն ամեն վայրկյան կարող է փոխվել, քանզի հակառակորդի ձեռագիրն ու գործելակերպը վաղուց են հայտնի:

***

Մեր զրույցից հետո գնդապետ Կարեն Շաքարյանը շտապում էր մարտական դիրքեր. նա պարբերաբար, ինչպես նշեցինք, շրջայցեր է կատարում ենթակա զորամասերի պահպանության ներքո գտնվող մարտական դիրքեր, անձամբ ծանոթանում իրավիճակին, ստուգում կատարվող մեծամասշտաբ աշխատանքների ընթացքը:

Եվ մեզ հնարավորություն ընձեռվեց գնալ այն դիրքեր, որտեղ այդ պահին մեկնում էր դիվիզիայի հրամանատարը:

Անկեղծ լինենք՝ դիրքերում հրամանատարին տեսանք բոլորովին այլ դերի մեջ:

Նա ոչ միայն խստապահանջ հրամանատար էր, այլեւ հոգատար ծնող ու ավագ ընկեր բոլոր մարտիկների, սպաների համար…

***

Դրվատելի է, որ Արցախի պաշտպանության առաջնագծի մի հատվածը վստահված է նման հրամանատարի:

Եվ այն ծնողը, ում որդին ծառայում է զորական այդ միավորման կազմում, պետք է հանգիստ եւ վստահ լինի, որ իր զավակը հենց այդտեղ է ծառայում, որ զորամասում ծնողի պատասխանատու եւ հոգատար դերը (իր փոխարեն) կատարում է հրամանատարը:

Այդ հրամանատարը գնդապետ Կարեն Շաքարյանն է:

Բարի ծառայություն հրամանատարին եւ բոլոր նրանց, ովքեր աչքի լույսի պես հսկում են հայոց արեւելյան սահմանները:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ ծնունդ:

Սամվել Ալեքսանյան

Ժամկետային զինծառայող Նարեկ Հովակիմյանը մարտական դիրքում

Ժամկետային զինծառայող Արման Անդրեասյանը մարտական դիրքում

Հենակետի պատասխանատու, ավագ լեյտենանտ Հովհաննես Միսակյանը

Տարեմուտ է: Գնում ենք Արցախի պաշտպանության առաջնագիծ: Գնում ենք նրանց մոտ, որոնց համար օրը հատուկ բովանդակություն ունի, ուրիշ հանդերձանք: Եվ օրվա յուրաքանչյուր ակնթարթն այդտեղ կարող է անակնկալ մատուցել: Իսկ նրանք՝ 18-20 տարեկան մեր տղաները, միշտ պատրաստ են: Եվ այդ նույն օրն ու այդ նույն օրվա ակնթարթն առասպել է հյուսում եւ առասպելն այդ սահմանապահ մեր խենթ ու խելառ տղաների մասին է, տղաներ, որ մեզ ժամանակի մեջ ինքնահաստատվելու իրավունք են տվել: Ու այդ տղաները մեր ազգի բարոյական զգեստը կարելու իրենց իրավունքն են իրացնում սահմանում՝ հենց իրենց տիրույթում ինքնահաստատվելու շնորհիվ: Ինքնահաստատվելով, նրանք հայոց ազգին գոյության իրավունք են տվել, հայ կոչվելու, հարատեւելու իրավունք են տվել:

Դե, եկ Վարդապետ ու մի խենթանա, դե եկ Վարդապետ ու մի խոնարհվիր նրանց առջեւ: Ամռան տապին ու անձրեւին, ձմռան բուք ու բորանին նրանք Արցախի սահմաններն են պաշտպանում: Եվ այդ տղաներն իրենց տեսակով նոր ձեւ ու իմաստ են տալիս հայրենասիրությանը, իրենց ձեւով, մտածելակերպով ու գործելակերպով սահմանում հայրենասիրություն հասկացությունը: Մարտական դիրքում խիզախներն են միայն, առյուծածին տղերքը հայոց: Իսկ մարտական դիրքը, ուր մենք ենք, թուրքերի դիրքերից հեռու է ընդամենը 300 մետր:

Օրը մառախլապատ է: Եվ մառախուղի միջից ասես հառնում են կապիտան Արմենակ Ուրֆանյանը, Ռոբերտ Աբաջյանը, Անդրանիկը, Քյարամը… Եվ ասես լսում եմ նրանց ձայնը՝ կրակ, կրակ...

Տղերքն ընկան հերոսաբար:

Առյուծի նման մռնչացին մնացած տղերքը...

Հենակետի պատասխանատու, ավագ լեյտենանտ Հովհաննես Միսակյանի համար դժվար է հիշել 2016-ի ապրիլյան քառօրյա պատերազմի օրերը:

Ինչ տղերք էին, ինչ զինվորներ՝ հոգոց հանելով ասում է Հովհաննեսը:

Զգում եմ, նրա համար դժվար է վերապրել անցած օրերը:

- Երեք ժամ շարունակ հրետակոծվել ենք, բայց պահել ենք դիրքերը, այն էլ՝ երեք դիրք: Ապրիլյանը չորս օրով չի ավարտվել, ապրիլի 23-ին նույնպես թեժ մարտեր էին: Թշնամին գազազած էր, ախր չէր կարողացել իրականացնել իր ծրագիրը: Բայց մենք փակեցինք նրա բերանը…

Ապրիլյանի տղերքից է Հովհաննես Միսակյանը: Ամուսնացած է, ունի երեք աղջիկ ու մի որդի: 2019 թ. մայիսին լրանում է նրա ծառայության ժամկետը:

- Շարունակելո՞ւ ես ծառայությունդ,-հարցնում եմ նրան:

Նա գլխով է անում: Ու ես նրա հայացքում կարդում եմ՝ իմ սիրտը սահմանում է, ախր ո՞նց թողնեմ սահմանը, իմ զինվորներին:

-Դա կլինի հավատափոխություն,- նրա միտքը բարձրաձայն շարունակում եմ ես:

-Այո, իմ հավատամքը հայ զինվորն է, իմ անձնական տիրույթն այս սահմանն է, այս դիրքը:

Հովհաննեսի համար աշխարհը սկսվում է սահմանից, այս խրամատից, աշխարհի կենտրոնն այս դիրքն է, նրա պատասխանատվության տիրույթն է մարտական այս դիրքը, իսկ խաղաղության խորհրդանիշն այս զինվորներն են՝ արի, աչալուրջ:

Հենակետի յուրաքանչյուր զինվորի համար անձնական պատասխանատվություն է կրում Հովհաննեսը: Եվ դա ոչ միայն ի պաշտոնե, այլ նաեւ որպես ավագ ընկեր: Իսկ հենակետում բարոյահոգեբանական մթնոլորտը տրամադրող է :Դրա համար էլ ծառայությունն այստեղ բոլորի համար հաճելի է, ծառայությունը հեշտ է անցնում:

- Մեզ համար թիվ մեկ թշնամին լարվածությունն է,- ասում է Հովհաննեսը,- այն որպես կատեգորիա չկա մեզանում: Ընկճված զինվոր չունենք: Եթե լինի, պետք է դիրքը թողնենք, գնանք…

Ասել է թե՝ ընկճված զինվորը թշնամու ջրաղացին ջուր լցնող է: Իսկ այստեղ բոլորը թշնամու ջրաղացի ջուրը կտրողն են: Հենակետի զինվորներից յուրաքանչյուրը պատրաստ է իր կյանքը զոհաբերել հանուն ընկերոջ: Իսկ սա մեր ամենամեծ հաղթաթղթերից մեկն է: Մի ուրիշ հաղթաթուղթ էլ ունենք. մեր զինվորը քաջ գիտի իր առաքելությունը, նա լավ է պատկերացնում իր առաքելության սահմանները: Եվ դա քարոզի արդյունք չէ, դա խոսում է նրա մարտական բարձր պատրաստվածության, հայրենիքի հանդեպ ունեցած անչափելի սիրո մասին: Իսկ գիտակից զինվորը մերթ գարնան հեղեղի է նման, մերթ դառնում է Սասնա Դավիթ ու Միհր: Իսկ Սասնա Դավթի թուր կեծակին մեր զինվորի ոգին է :

Հովհաննեսը համամիտ է ինձ հետ: Ճիշտ այդպես՝ ասում է նա:

Հենակետն իր մատուռն ունի, զինվորները մոմ են վառում, աղոթք անում, հաղորդակցվում Բարձրյալի հետ: Իսկ խրամատ տանող թեքության վրա մանր քարերով խաչ են պատրաստել ու գրել՝ **«Հանուն հոր …»:** Զինվորները հենակետում ծաղիկներ էլ են աճեցնում:

Խենթանալ կարելի է, այս ի՜նչ տղաներ են, Աստված իմ, այս տղաներին գետնել չկա ու զուր է թուրքը հոխորտում՝ իսրայելական արտադրության անօդաչուներ ունենք, էս ունենք, էն ունենք՝ անթիվ, անսպառ: Բա մեր զինվորի ոգին ուր, ձեր զինվորի ոգին ուր... Այնպես որ, ձեններդ կտրեք, սսկվեք ձեր տեղում, թե չէ Սասնա Դավթի թուր կեծակին գործի կանցնի եւ քառսուն գոմշի կաշին էլ չի փրկի ձեզ:

Ծաղիկներ, հիմա էլ արծիվներ հայտնվեցին:

- Արծիվները եկել են արծիվների մոտ…

Հետ եմ շրջվում: Բարձրահասակ, գեղեցիկ աչք-ունքով զինվոր է, Նժդեհի գիրքն էլ ձեռքին:

-Մեզ համար պատիվ է ծառայել այս հենակետում,- ասում է նա,- **այստեղ քաջերն են ծառայում**:

Այո, քաջերն են այդտեղ: Նրանց շնորհիվ է, որ սահմանն անխոցելի է: Եվ այդ խիզախները հայոց խիղճն են ու պատիվը, հայ ազգի գալիքվելու այցեքարտն են, հայոց ձայնը, հայոց հույսն ու պատվարը: Ու այս տղաների, նաեւ նրանց նախորդած տղաների շնորհիվ է, որ Արցախը կանգուն է եւ կամուրջ է ձգել դեպի ապագան:

Հրաժեշտ ենք տալիս արծիվներին եւ նրանցով հզորացած-սրբացած բռնում տունդարձի ճամփան՝ ասելով՝ երիցս օրհնվես դու, հայ ԶԻՆՎՈՐ:

Ալվարդ Մեսրոպյան

Սահմանում սարերի պես փղերք են կանգնած

Արցախի պաշտպանության բանակի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի՝ ԶԼՄ-ների գծով պատասխանատու, կապիտան Գեղամ Գրիգորյանի ուղեկցությամբ ուղեւորվեցինք առաջնագիծ՝ հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքեր, որտեղ զինծառայողները մարտական հերթապահություն էին իրականացնում:

Հանդիպեցինք հայրենիքի սահմաններն անառիկ պահող դիրքապահ տղաներին՝ նրանց նվիրական առաքելությունն արժեւորելու, զրուցելու նրանց առօրյայից ու հոգսերից:

Նրանք բոլորն էլ հայրենիքին, ծառայությանը նվիրված տղաներ են, հասկանում են կատարած գործի, ստանձնած առաքելության կարեւորությունը:

Ժամկետային զինծառայող Տարոնը(լուսանկարում՝ աջից), ում մեկ ամսից էլ քիչ է մնացել ծառայության, ասաց, որ դիրքային ծառայությունն ամբողջությամբ փոխել է իրեն, ինքն այսօր անճանաչելի է, նման չէ այն տղային, ով առաջին անգամ դիրք էր բարձրացել: Մինչ զորակոչվելը՝ զինծառայության մասին գրեթե պատկերացում չուներ, իսկ ահա, բանակ գալով՝ ֆիզիկապես եւ հոգեպես կոփվել, դարձել է հայրենիքին նվիրյալ իսկական մարտիկ:

Նա իր զինակից ընկերների հետ հաղթահարել եւ այսօր էլ հաղթահարում է ամեն մի դժվարություն, գիտակցում իր պարտքը հայրենիքի հանդեպ:

Դիրքերում հանդիպեցինք նաեւ Տարոնի զինակից ընկերոջը՝ շարքային Արման Ղավալբաբունցին(լուսանկարում՝ ձախից), ում ծառայությանը եւս քիչ է մնացել՝ մեկ ամիս:

Առաջինը, որ նկատեցի, Արմանի կոշիկներն էին՝ ցեխոտ, հնամաշ: Հենց կոշիկներից էլ սկսեցի հարցս.

-Արման, ինչո՞ւ են կոշիկներդ այդ վիճակում՝ ոչ ձմեռային եւ հնամաշ:

Պարզվեց՝ Արմանը զրույցից առաջ հողաշինական աշխատանքներ էր կատարում:

Զինվորը վազքով մտավ կացարաններից մեկը եւ այնտեղից բերեց ձմեռային իր նոր կոշիկները, ցույց տվեց.

-Ահա, գուցե չհավատաք, ձմեռայինն էլ ունեմ, ուղղակի գործ էի անում, հներն էի հագել, որ չփչանան:

-Ընդհանուր առմամբ, գո՞հ եք հանդերձանքից, ժամանակին փոխվո՞ւմ են դրանք՝ եղանակին համապատասխան:

Դիրքապահ զինվորներին խնդրեցի առանց քաշվելու անկեղծ լինել եւ մանրամասն ներկայացնել սննդի, հանդերձանքի, կենցաղային պարագաների մասին:

Արդյո՞ք ժամանակին սնունդը տեղ է հասնում՝ որակյալ ու թարմ:

Տնից ինչպիսի՞ կենցաղային իրեր, գուլպա, ներքնաշապիկ եւ այլ հանդերձանք են ծնողներն ուղարկում:

Հարցս մի քիչ շփոթեցնող էր, որպեսզի տղաները ժամանակ չունենային մտածել եւ անկեղծորեն պատասխանեին:

Չշփոթվեցին, միանգամայն անմիջական հնչեց պատասխանը:

-Ամեն ինչից գոհ ենք, մեր տներում էլ այդպես կալորիական չենք սնվել: Ամեն օր ուտում ենք մսով կերակուրներ: Օրական երեք անգամ սնվում ենք՝ բազմազան, օրվա ժամերին համապատասխան: Հաճախ այնքան շատ է մատուցվում սնունդը, որ չենք կարողանում ուտել:

Ինչ վերաբերում է տնից որեւէ բան ուղարկելուն, նման դեպք չի եղել, այստեղ մեզ ամեն ինչով ապահովում են՝ եւ կենցաղային իրեր, եւ ներքնաշապիկ ու գուլպա: Ուղարկելու կամ բերելու կարիքը չկա:

Ժամակետայիններն այստեղ՝ ամենաբարդ դիրքային ծառայության են եկել ուսումնական դասընթացներից հետո, շուրջ մեկ եւ կես տարի առաջ: Ամեն ինչից երեւում էր, որ նրանք ոչ միայն հարմարվել են դժվարին ծառայությանը, այլեւ իրենց շատ լավ են զգում՝ փորձառու զինվորի ու տանտիրոջ պես:

Հարցը Տարոնին ուղղեցի, ով մեկ ամիս շուտ էր եկել առաջնագիծ: Նա ավարտել է Վանաձորի միջնակարգ դպրոցը, այնուհետ՝ գյուղատնտեսական քոլեջը:

-Տարոն, հեռավորությունը դիրքերից Ադրբեջանի առաջնագիծ՝ մի քանի հարյուր մետր է: Վախ, տագնապ, կամ անհանգստություն չե՞ք ունեցել երբեւէ:

Դժվա՞ր չէ առաջնագծում ծառայելը:

Զարմանալի է, բայց Տարոնի պատասխանը միանգամայն հասուն մարդու պատասխան էր.

-Դժվարությունը տղամարդու համար է, իմ եւ զինակից ընկերներիս անունից եմ ասում. վախի կամ տագնապի դեպքեր չեն եղել, որովհետեւ այստեղ ամեն ինչ մեր

Նախաամանորի այց Արցախ. հեպադարձ հայացք

Գեղամ Գրիգորյան

Սենոր Հասրաթյան

Արմեն Մկրտչյան

Ամեն անգամ, երբ մեկնում ենք Արցախի պաշտպանության մարտական դիրքեր ու զորացած, ոգեւորված, գոտեպնդված, տպավորված վերադառնում այնտեղից՝ ավելի է հիմնավոր դառնում մեր հիացությունը Սենոր Հասրաթյանի ու Գեղամ Գրիգորյանի ծառայության հանդեպ:

Գնդապետ Սենոր Հասրաթյանն Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետն է:

Գալիս է Պաշտպանության բանակի մաքրամաքուր ակունքներից:

Պաշտպանության բանակի պատմության քայլող եւ անկրկնելի հանրագիտարանն է:

Պաշտպանության բանակի մերօրյա՝ ոչ պակաս փառապանծ ընթացքն աշխարհին արժանապատվորեն եւ ճշմարիտ ներկայացնողն է:

Հենց Սենոր Հասրաթյանի շնորհիվ է նաեւ, որ բազմաթիվ լրատվամիջոցներ (այդ թվում՝ «Սյունյաց երկիրը») կարողանում են պատշաճ լուսաբանել Արցախի զինված ուժերի առօրյան:

Նա լավագույնս է գիտակցում, որ Սյունիքն ու Արցախը միեւնույն ծնողի զավակներն են, շատ դեպքերում՝ միեւնույն ճակատագրի կրողները, պատմության բոլոր փուլերում միմյանց թեւ-թիկունք կանգնողները:

Եվ գնահատելի է, որ կա Սենոր Հասրաթյան մտավորականի տեսակը, թե չէ ամեն մի իշխանափոխությունից կամ մարդափոխությունից հետո կվերաշարադրվեր Արցախյան հերոսամարտի պատմությունը՝ այն հարմարեցնելով եկող-գնացող իշխանավորների քիմքին...

***

Մեր ստեղծագործական խմբին՝ Արցախյան վերջին երեք այցելության ընթացքում, ուղեկցող էր նշանակվել Պաշտպանության բանակի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի՝ ԶԼՄ-ների գծով պատասխանատու, կապիտան Գեղամ Գրիգորյանը:

Մի անգամ արդեն առիթ ենք ունեցել մեր պարբերականի էջերում թռուցիկ հայացք ձգել Գեղամ Գրիգորյանի կերպարին:

Հիանալի սպա, հիանալի մարդ ու քաղաքացի, Արցախ աշխարհի իսկական նվիրյալ:

Քաջածանոթ է արցախաադրբեջանական սահմանային ամբողջ տարածքին՝ մի քանի տասնյակ (եթե ոչ հարյուրավոր) կիլոմետր ձգվող:

Մարտական դիրքեր մեկնելու ճանապարհին այս անգամ մեզ միացավ հյուսիսարեւելյան պաշտպանական շրջանի հրամանատարի՝ բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ, փոխգնդապետ Արմեն Մկրտչյանը:

Գյումրիից է, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի շրջանավարտ:

2003-ից ծառայության է նշանակվել Պաշտպանության բանակում, մինչեւ հիմա էլ ընտանիքով բնակվում է Արցախում (կինը նույնպես Գյումրիից է):

Արցախում էլ ունեցել են երկու զավակ, ովքեր, ըստ Արմեն Մկրտչյանի, ոչ թե գյումրեցի են, այլ արցախցի:

Մեր շրջագայության ընթացքում Արմեն Մկրտչյանն ուշագրավ տեղեկություններ պատմեց ժամկետային զինվորների ծառայության մեջ կատարված ու կատարվող դրական

էջ 8

կողմից աչալուրջ վերահսկվում է, թշնամու ամեն շարժը մեր նշանակետի տակ է:

-Իսկ դիրքապահները կարողանո՞ւմ են պահպանել անհրաժեշտ զգուշություն, չէ՞ որ մի աննշան շեղումն էլ բավական է, որպեսզի հակառակորդը նկատի ձեզ եւ կրակ արձակի:

-Չափազանց զգույշ ենք, այդ եւ այլ մարտական թեմաներով մեր հրամանատարները պարբերաբար զրույցներ, պարապմունքներ են անցկացնում մեզ հետ: Մինչեւ հիմա, որքան ծառայել եմ այստեղ, սատանայի ականջը խուլ, անզգուշության դեպք կամ պատահար չեն եղել:

Ապրիլյան քառօրյային այստեղ թեժ մարտեր են ծավալվել, հենց մեր դիրքերում, հիմա հակառակորդն ինքն էլ լավ գիտե, թե որքան ուժեղացված են մեր հետախուզությունն ու պաշտպանությունը, նա չի համարձակվի կրակ բացել այս ուղղությամբ:

Զրույցին խառնվում է հյուսիսարեւելյան պաշտպանական շրջանի հրամանատարի՝ բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ, փոխգնդապետ Արմեն Մկրտչյանն ու ասում.

-Մեր քաջ դիրքապահների, նրանց անմիջական հրամանատարների շնորհիվ սահմանները, իրոք, հուսալի ձեռքերում են:

Դիրքերում կանգնած 18-20 տարեկան տղաներն ու նրանց ուսուցանող հրամանատարները... յուրաքանչյուր պահի նրանք պատրաստ են պաշտպանել հայրենիքի սահմանները եւ խափանել հակառակորդի ոտնձգությունները:

Ժամանակին, այո, այս դիրքից մեր զինվորները մարտեր են վարել, հերոսաբար կռվել, հակառակորդի առաջխաղացումը կասեցրել, թույլ չեն տվել մեր դիրքերի մեկ ներթափանցում:

Հպարտությամբ կարող եմ ասել, որ մեր դիրքապահները գիտակցում են իրենց դերն ու անելիքը, հետեւում են կարգապահությանը, հրամանատարների ցուցումներին, պատասխանատվությամբ են կատարում իրենց պարտականությունները:

Հրամկազմը, թե՝ վարչակազմի սպաներս բոլոր հարցերում եւ խնդիրներում դիրքապահ անձնակազմի հետ ենք՝ մեր ընկերական խորհուրդներով, ցուցումներով, նրանց միշտ էլ զգաստության ենք կոչել:

Շատ կարեւոր է զինծառայողի մասնագիտական պատրաստվածությունը հակառակորդի գործողությունների դեպքում եւ թե՝ մարտը վարելիս:

Այդ նպատակով պարբերաբար պարապմունքներ ենք անցկացնում, ուսուցանում, թե հակառակորդի դիվերսիոն գործողություններին ինչպես պետք է արձագանքել, ինչ պետք է անել:

Շատ ենք կարեւորում ընկերական վերաբերմունքը դիրքապահի, առհասարակ՝ ժամկետային զինծառայողի հետ, քանի որ դրանով շատ բան է պայմանավորված, առաջինը հենց՝ մեզ առաջադրված խնդիրների հաջողությամբ իրականացումը:

Խորհրդակցումներ, կարծիքների փոխանակում, տեղանքում անելիքների ճշտում, դրանց արդյունավետ իրականացում. պարբերական են եւ՝ անհրաժեշտ:

Նորից դիմելով դիքապահներին, հարցն ուղղում եմ Տարոնին, ով զորակոչվել է 2017-ի հունվարին եւ, ինչպես խոստովանում է, դեռեւս պատանի տարիքից զբաղվել է սպորտով, ինչն էլ օգնում է ծառայողական պարտականությունների բարձր մակարդակով կատարմանը:

-Ես չգիտեի, որ դիրքապահ եմ գալու, բայց գիտակցում էի, որ մարզված լինելն անհրաժեշտ է լինելու հետագայում՝ ծառայության ընթացքում:

Դիրքապահը պետք է ֆիզիկապես կոփված լինի, այստեղ թույլ կամ չկոփված զինվորի տեղը չէ: Ֆիզիկական կոփվածությունս ինձ օգնել է հաղթահարել դիրքապահի պարտականությունների կատարման շատ դժվարություններ, մշտապես զգոն լինել:

-Իսկ Տարոնը հե՞շտ է հարմարվել զինվորի՝ ծանր ու պատասխանատու առօրյային, մանավանդ՝ դիրքապահի առօրյային:

-Հեշտ բան չկա, բայց նախքան զորակոչվելս՝ ավելի դժվար էի պատկերացնում զինվորական ծառայությունը:

Դրանում ինձ օգնել է ոչ միայն ֆիզիկական կոփվածությունս, նաեւ՝ ավագ եղբայրս անցած տարի է ավարտել ծառայությունը, արդեն որոշ չափով տեղյակ էի պատերազմի եւ զինծառայության մասին, նրա փորձն ինձ համար մեծ դաս էր հետագա ծառայողական պարտականություններս սրբորեն եւ անթերի կատարելու համար:

Փոխգնդապետ Արմեն Մկրտչյանը նորից միջամտում, ավելացնում է.

-Մեր դիրքապահները բոլորն էլ հիմնականում կոփված են, որոշներն էլ հենց դիրքերում են կոփվում, դառնում իսկական զինվոր:

Ի դեպ, անձնակազմի զինծառայողները բոլորն էլ գիտակցաբար են վերաբերվում դիրքապահի պարտականությունների կատարմանը:

Այստեղ ծառայությունը կազմակերպված է ըստ օրվա կարգացուցակի, իրականացված են ինժեներական բազմաթիվ աշխատանքներ, դիրքապահների անվտանգությանն ուղղված միջոցառումներ:

Կարող եք մտնել ամեն մի խրամուղի, շրջել նրա ողջ տարածքով, խնդրեմ, ամենուր դուք կտեսնեք մաքրություն, կարգապահություն, մարտական հերթապահության ճշգրիտ կատարում:

Անձնակազմի հրամանատարը պարբերաբար ստուգում է ծառայության ընթացքը, լրացուցիչ հրահանգներ տալիս, անդրադառնում անվտանգության կանոնների խիստ պահպանմանը:

Մեր դիրքապահը հրաշալի տեղեկացված է, որ հակառակորդը սովորաբար օգտվում է իրենց զգոնության նույնիսկ ամենաաննշան թուլացումից:

Կոնկրետ այս հենակետում դա բացառված է, բայց եւ՝ չպետք է ոչ մի ակնթարթ զգոնությունը կորցնել, բավարարվել ունեցած աչալրջությամբ: Օր-օրի պետք է կատարելագործել զգոնությունն ու պատասխանատվությունը, ինչն էլ արվում է:

Ճիշտ է, վերջին շրջանում համեմատաբար հանգիստ է հակառակորդը, բայց դա ոչինչ չի նշանակում: Երբեք չես իմանա՝ ինչ հերթական դիվերսիա է մոգոնում նա, չպետք է զգոնությունն ու մարտունակությունը ոչ մի ակնթարթ թուլացնել:

Դիրքապահներ Արմանին եւ Տարոնին մեկ ամսից էլ քիչ է մնացել ծառայության, նրանց արդեն անհամբեր սպասում են ծնողները, հարազատները:

Հաշվու՞մ են, արդյոք, ծառայության վերջին օրերը, թե՞ մի քիչ էլ տխրում են, որ շուտով պետք է հրաժեշտ տան հարազատ օջախ դարձած զորամասին, զինակից ընկերներին ու հրամանատարներին:

Տարոնը ժպտում, կատակում է.

-Չեմ հաշվում, որ հաշվեմ՝ ուշ կանցնի: Սա կատակով եմ ասում: Իրոք, մի քիչ էլ տխրում եմ, այնքան շատ եմ սովորել զինվորական կոլեկտիվիս, ասես մի տուն լինենք, հարազատ եղբայրներ: Այս երկու տարին ինձ շատ բան տվեց, առաջինը՝ ընկերասիրություն, հայրենիքի հանդեպ սեր ու պատասխանատվություն, պարտքի զգացում:

Կարծում եմ՝ զորացրվելուց հետո էլ յուրաքանչյուր երիտասարդ պետք է մնա զինվոր, չմոռանա այստեղ սովորածը, իր մասնագիտական գիտելիքները, ծառայության տված փորձը, դասերը, որովհետեւ, քանի դեռ մեր հայրենիքը պատերազմական վիճակում է, մենք պետք է ամեն վայրկյան պատրաստ լինենք նորից զորակոչվելու, օգնության հասնելու նրան, հակառակորդին արժանի հարված հասցնելու:

Արմանն այս հարցին ավելի զգացմունքայնի է պատասխանում.

-Ճիշտ է, անկախ իմ կամքից հաշվում եմ օրերը, բայց գիտեմ, որ բոլորին կարոտելու եմ: Ինձ թվում է՝ երազում էլ տեսնելու եմ այս դիրքերը, նրանց պաշտպանող ընկերներիս, նույն լարվածությունն եմ ունենալու, որովհետեւ չեմ պատկերացնում, թե ինչպես կարող եմ հանգիստ քնել՝ իմանալով, որ երկու-երեք հարյուր մետրի վրա հակառակորդն է կանգնած. եւ ես այնտեղ չեմ:

Նախապես շնորհավորելով մեր դիրքապահների Ամանորն ու նրանց հաջողություններ, անփորձանք ծառայություն բարեմաղթելով, վերջին հարցն եմ ուղղում.

-Տղաներ, ի՞նչ կբարեմաղթեիք Արցախի եւ Հայաստանի ժողովրդին:

Պատասխանն էլ նույնն էր՝ ուրախ Ամանոր եւ խաղաղություն, ինչը, խոստացան, իրենք ապահովելու են հարյուր տոկոսով:

Բարի, անփորձանք ծառայություն, դիրքապահներ:

Մեր ժողովրդի անունից էլ ավելի ուրախ, երջանիկ Ամանոր ենք մաղթում ձեզ, հաջողություններ նոր տարում եւ միշտ...

Շնորհակալ ենք ձեզ, մեր քաջ ու հերոս տղաներ, Աստված ձեզ պահապան:

***

Մառախուղն իջել, արագորեն ծածկել էր շուրջբոլորը, սկսել էր ձյուն տեղալ:

Նկատեցինք՝ դիրքապահներն ավելի զգոն են կատարում դիտարկումը, տեղանքի զննումն ու հակառակորդի հնարավոր շարժի կասեցումը:

Ճանապարհին զրույցը դեռ երկար շարունակվում է:

Բոլորիս մտահոգությունն ու հարցերի հարցը երկրի ու նրա սահմանների անվտանգությունն են:

Գիշերով եկանք Շուշի, Սբ Ղազանչեցոց մայր տաճարին՝ պարտադիր այցի:

Մոմ վառեցինք Արցախի եւ Հայաստանի խաղաղության, զորական ուժերի անփորձանք ծառայության, մեր երկու բանակի հզորության, անպարտելիության համար եւ հաստատ յուրաքանչյուրս մեր մտքում աղոթք հղեցինք առ Աստված՝ թող Հայոց երկրում այգաբացներն ամենուր խաղաղ լինեն, անձնակազմերի հրամանատարներն էլ միշտ զեկուցեն.

-Մարտական իրադրությունը կայուն է, անձնակազմը՝ հզոր եւ մարտունակ, հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման դեպքեր չեն արձանագրվել...

Այդպես էլ կլինի, որովհետեւ երկրի սահմաններում սարերի պես հզոր տղերք են կանգնած:

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Պիլարսկին վերահաստատեց, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում տեղի է ունեցել սեփականության վերաբաշխում, իսկ թե ով է ումից խլել, առայժմ չի գաղտնազերծում



Աժ արտահերթ ընտրության նախապատրաստության օրերին Սյունիքում տեղի ունեցավ ոչ սովորական մի իրադարձություն, որին հասկանալի պատճառով չհասցրեցինք անդրադառնալ…

Բայց տեղի ունեցածն այնքան ուշագրավ է Սյունիքի մարզի համար, որ չենք կարող գոնե ուշացումով չանդրադառնալ դրան, մանավանդ որ կատարվածի կարեւորությունը չի նվազել ու չի նվազի, քանի դեռ…

Եվ այսպես՝ Աժ արտահերթ ընտրության շեմին հայ հանրությունը շարունակում էր որոնել հարցերի պատասխանը, թե ովքեր են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բաժնետերերը, ինչպես եւ ինչ ճանապարհով են դարձել սեփականատեր, չէ որ խոսքը Սյունիքի տնտեսության 80 տոկոսի մասին է:

Խնդրի հանդեպ հանրային հետաքրքրությունն այնքան մեծ էր, իսկ պատասխաններն այնքան անհեթեթ էին, որ գործին լծվեց նաեւ Հայաստանի կառավարությունը՝ քարոզչական իր ամբողջ հնարավորություններով:

Ձեռնարկվող քայլերից մեկն էլ այն էր, որ ընտրության նախօրեին Հայաստան բերվեց գերմանական «Քրոնիմետ մայնինգ» ընկերության խորհրդի նախագահ Գյունտեր Պիլարսկին:

Բերել էին, որ մարդու նկարի ֆոնի վրա հայտարարվի, թե կոմբինատի 75 տոկոսի բաժնետերն ինքն է, որ կա:

Եվ երկու օր շարունակ՝ նոյեմբերի 19-ին ու 20-ին, իշխանական, ինչպես եւ Քաջարանից սնվող լրատվամիջոցները տարփողում էին, թե Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի 75 տոկոսի սեփականատերը նույն ինքը՝ Պիլարսկին է:

Այդ մարդուն նոյեմբերի 20-ին ուղղաթիռով բերեցին Քաջարան, լուսանկարեցին, խնդրեցին բերանը բացուխուփ անել, որպեսզի այդ ամենի համապատկերի վրա ինչ-որ տեքստ ընթերցվի հայերեն լեզվով:

Եվ Հայաստանի ու Գերմանիայի դրոշների շուքի ներքո այդ ամենը տեղի ունեցավ, ինչ-որ մեկն էլ ընթերցեց նախապես գրված տեքստը:

Հեռուստադիտողը, բնականաբար, չհասկացավ, թե ինչ է ասում Պիլարսկին: Ինքը՝ Պիլարսկին նույնպես (հավանաբար) չհասկացավ, թե ինչ են ասում իր անձ-դեկորացիայի ֆոնի վրա:

Իսկ մատուցված հայերեն տեքստը, թե իբր Պիլարսկու խոսքի թարգմանված շարադրանքն է, բառացիորեն նույնն էր, ինչ քանիցս լսել էինք գաղութարարներից:

Խոսքի մեխը, ինչպես եւ սպասվում էր, մեկ հարց էր՝ հանրությանը համոզել, որ կոմբինատի 75 տոկոսի տերն այդ մարդն է:

Մենք, անշուշտ, կանդրադառնանք Պիլարսկու այցելության առանցք հանդիսացող այդ դրվագին:

Մինչ այդ՝ երկու նկատառում, որ ներկայացվեց իբրեւ Պիլարսկու խոսք, որը, ցավոք, այդ մարդուն դրեց շողոքորթի, քծնվողի ամոթալի դերում:

Ըստ հեռուստաելույթի տեքստի՝ Պիլարսկին դրվատանքով արտահայտվեց Նիկոլ Փաշինյանի հետ տեղի ունեցած հանդիպման մասին:

Կարելի էր, իհարկե, հավատ ընծայել տվյալ արտահայտության հանդեպ: Բայց մեր արխիվը մի փոքր պրպտելուց հետո նկատեցինք, որ այդ մարդը նույն կամ գրեթե նույն արտահայտությունը ժամանակին արել է նաեւ Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի հետ հանդիպումներից անմիջապես հետո:

Այնուհետեւ՝ Պիլարսկին (իբր) արձանագրում է, թե Քաջարան քաղաքում վերջին շրջանում տեղի են ունեցել **«դրական, ահռելի փոփոխություններ»,** իսկ Քաջարանը դարձել է **«ակտիվ զարգացող քաղաք»:**

Պիլարսկին (եթե, իհարկե, ինքն է այդ խոսքերի հեղինակը) դրանով կրկին անգամ կեղծում եւ պղծում է իրականությունը, վիրավորում սյունեցիներին, շողոքորթում նրանց, ովքեր իրեն դեկորացիայի դեր են վերապահում:

Պատկերացնո՞ւմ եք, Պիլարսկու՝ Քաջարանում սեփականատեր դառնալուց հետո եւ հատկապես վերջին տարիներին, այդ քաղաքում մեկ երիտասարդ ընտանիք անգամ բնակարանով չի ապահովվել, մեկ բնակելի շենք անգամ չի կառուցվել, որեւէ սոցիալական խնդիր չի լուծվել, հանրային նշանակության որեւէ ենթակառույց չի ստեղծվել:

Այդ ընթացքում կոմբինատի ղեկավարները խլել են նույնիսկ երեխաների ամառային հանգստի ճամբարը եւ իրենց համար գիշերային խրախճանքի վայր դարձրել:

Այդ ընթացքում տեղացի վարորդների մեծ մասը զրկվել է կոմբինատից Երեւան խտանյութ տեղափոխելու եւ իր տունն այդկերպ պահելու տարրական հնարավորությունից:

Այդ ընթացքում տարածաշրջանում բազմապատիկ անգամ սրվել է բնապահպանական վիճակը՝ մարդկանց կյանքին ու առողջությանը վտանգ սպառնալով:

Այդ ընթացքում (տարեկան մոտ 20 մլրդ դրամի չափով) պակասել են պետությանը վճարվող հարկերը:

Այդ ընթացքում արձանագրվել է արդյունահանվող հանքաքարի ծավալների ապօրինի աճ:

Այդ ընթացքում…

Եվ Պիլարսկի կոչվածն առանց կարմրելու հայտարարում է, թե Քաջարանում **«դրական, ահռելի փոփոխություններ են արձանագրվել»:**

***

Հիմա՝ գլխավորի մասին, ինչի համար ծերուկին Գերմանիայից բերեցին Երեւան, ապա՝ Քաջարան:

Միջանկյալ կարգով ասենք, որ Պիլարսկու նշված հեռուստաելույթը սփռվել է Սյունիքում գործող երիցս ապօրինի հեռուստատեսությամբ, որն ընդամենը մի քանի ասպատակի շահ է սպասարկում:

Հեռուստաթողարկման մեջ Պիլարսկուն մի անգամ ներկայացրին իբրեւ «Քրոնիմետ մայնինգ» ընկերության խորհրդի նախագահ, մեկ ուրիշ անգամ՝ «Քրոնիմետ» ընկերությունների խմբի խորհրդի նախագահ, ապա՝ Քաջարանի կոմբինատի 75 տոկոս բաժնեմասի սեփականատեր:

Իհարկե, «Քրոնիմետ մայնինգ» ընկերության խորհրդի նախագահը կարող է եւ լինել այդ ընկերության սեփականատերերից մեկը (տեսականորեն դա չի բացառվում):

Բայց դրա համար հարկավոր է հստակ պատասխանել՝ Գյունտեր Պիլարսկին «Քրոնիմետ մայնինգի» սեփականատե՞րն է, սեփականատերերից մե՞կն է, թե՞ խորհրդի նախագահը, թե՞ այդ բոլորը միասին վերցրած:

Բանն այն է, որ տարիներ շարունակ նրան ներկայացրել են իբրեւ ընկերության խորհրդի նախագահ, իսկ հիմա (վերջին մեկ ամսում) ներկայացնում են իբրեւ ընկերության 75 տոկոսի սեփականատեր:

Դա էլ կարող ենք ընդունել իբրեւ ճշմարտություն, բայց…

Որքան էլ զարմանալի է, Գյունտեր Պիլարսկին բեմադրված հեռուստաելույթում այդպես էլ չասաց, թե ինքն է «Քրոնիմետ մայնինգի» սեփականատերը:

Նա ընդամենը եւ բառացիորեն ասաց հետեւյալը. **«Ես եւ իմ ընտանիքին պատկանող «Քրոնիմետ» ընկերությունների խումբն է Զանգեզուրի կոմբինատի հիմնական բաժնետերը»:**

Այնուհետեւ ավելացրեց. **«Ավելի քան իրական է, որ մենք ենք ընկերության բաժնետերերը»:**

Պատկերացնո՞ւմ եք, մարդուն Գերմանիայից հատուկ բերել են Հայաստան, որ Աժ ընտրությունից առաջ հայ հանրությանն ասի, թե ինքն է կոմբինատի 75 տոկոսի սեփականատերը, բայց ոչ միայն չի ասում, այլեւ պատկերն ավելի է խճճում:

Պիլարսկու խոսքից, մինչդեռ, հստակ հասկացվում է՝ ինքը «Քրոնիմետ մայնինգի» սեփականատերերից մեկն է, ինքը նաեւ այդ ընկերության խորհրդի նախագահն է:

Եվ ոչ մի խոսք այն մասին, թե ովքեր են «Քրոնիմետ մայնինգի» մյուս սեփականատերերը:

Պիլարսկին չի ասում, թե ովքե՞ր են մտնում «Մենք»-ի մեջ, թե ո՞ր ընկերություններն են մտնում «Քրոնիմետ» ընկերությունների խմբի մեջ, թե ի՞նչ ասել է «Իմ ընտանիք» արտահայտությունը:

Հատկապես «ընտանիք» արտահայտությունը կարող է ամենատարբեր ենթադրությունների տեղիք տալ:

Մի շարք գեղարվեստական ֆիլմերում, օրինակ, «ընտանիք» արտահայտությունը նույնացվում է «մաֆիոզ խումբ» արտահայտության հետ:

Եվ որպեսզի մենք էլ զուգահեռներ չանցկացնենք երկու այդ արտահայտության միջեւ, Պիլարսկին պետք է բացի փակագծերը:

Ի դեպ, Հայաստանի քաղաքացիական օրենսդրության հստակ ձեւակերպումներով՝ որեւէ գույքի սեփականատեր կարող է լինել ֆիզիկական անձը, իրավաբանական անձը…

Գույքի սեփականատեր չեն կարող լինել «Մենք»-ը, «Իմ ընտանիք»-ը եւ նմանատիպ այլ վերացական ու իրավական արժեք չունեցող սուբյեկտները…

***

Պիլարսկուն վերագրվող հեռուստաելույթում ուշագրավ այլ դրվագ էլ կա:

Պարզվում է՝ նա ուշադրությամբ հետեւում է Զանգեզուրի կոմբինատի մասին լրատվամիջոցների հրապարակումներին, որոնք **«իրականության հետ կապ չունեցող դատողություններ են»** եւ ինքը հակում չունի անդրադառնալ այդ **«բամբասանքին»:**

Դե ինչ, շատ լավ է, որ «Քրոնիմետի» խորհրդի նախագահը տեղյակ է հայաստանյան լրատվամիջոցների հրապարակումներին:

Բայց ինքը ստում է (որը վայել չէ առաջացած տարիք ունեցող մարդուն), երբ ասում է, թե **«հակում չունի անդրադառնալ այդ բամբասանքին»:**

Տեսեք՝ **«այդ բամբասանքին»** անդրադառնալու համար է նա եկել-հասել Քաջարան, որ նկարվի ու իր անունից խոսք սփռելու թույլտվություն տա ոմանց (կամ իր ելույթի պատրանք ստեղծի):

«Այդ բամբասանքի» հեղինակներից մեկին (միայն մեկին)՝ «Սյունյաց երկիր» լրատվամիջոցին, հետապնդելու եւ հալածելու համար քաղաքացիական տասնմեկ հայց է ներկայացրել հայաստանյան դատարաններ:

Եվ, այդուհանդերձ, մեծ անբարոյականություն է թույլ տալիս Գյունտերը, երբ հայաստանյան քաղաքական դաշտում հնչող խոսքերը (Քաջարանի կոմբինատին առնչվող) բամբասանք է համարում:

Նախ՝ չենք կարծում, թե ինքն այն մարդն է կամ բարոյականության այն կրողն է, ով կարող է Գերմանիայից գալ ու մեզ դաս տալ, նաեւ դիտողություններ անել:

Մյուս կողմից՝ մի՞թե բամբասանք է, օրինակ, Արթուր Բաղդասարյանի հազար անգամ հնչեցրած հայտարարությունը, թե տարեկան 1 մլրդ դոլար շրջանառություն ունեցող կոմբինատը մասնավորեցվել է 132 մլն դոլարով:

Մի՞թե բամբասանք է Հայաստանի հազարավոր բնակիչների հետաքրքրությունն առ այն, թե ովքեր էին կոմբինատի բաժնետերերը 2004-ին եւ ովքեր են հիմա:

Մի՞թե բամբասանք է Աժ նախկին փոխխոսնակի հայտարարությունը, թե Քաջարանի կոմբինատը տարեկան արդյունահանում է 40 մլն տոննա հանքաքար՝ չունենալով համապատասխան լիցենզիա:

Մի՞թե բամբասանք է… (հարցադրումները կարող ենք անվերջ շարունակել):

***

Պիլարսկու հայաստանյան այցից եւ քաջարանյան հեռուստաելույթից հետո Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի շուրջ հանրության պատկերացումներն ավելի են խճճվել՝ տեղիք տալով նորանոր հարցերի:

Նախ՝ եթե «Քրոնիմետ մայնինգ» ընկերությունն է կամ «Քրոնիմետ» ընկերությունների խումբն է Քաջարանի կոմբինատի 75 տոկոսի սեփականատերը, ապա ինչո՞ւ այդ ընկերության խորհրդի նախագահը բացատրություն չի տալիս հայ հանրությանը, թե վերջին չորս տարում ինչու է խայտառակ չափով իջել պետությանը վճարվող հարկերի չափը (որոշ տարիների՝ մինչեւ 29 մլրդ դրամի չափով):

Կամ՝ ինչպե՞ս ստացվեց, որ 2018 թ. հուլիսի 5-ին վարչապետի՝ Քաջարան այցելելուց հետո, մեկ եռամսյակում 20 մլրդ դրամով միանգամից ավելացավ պետությանը վճարվող հարկերի չափը:

***

Պիլարսկու հեռուստաելույթից (կամ նրան վերագրվող հեռուստաելույթից) հետո ակնհայտ է դառնում, որ վերջին երեք-չորս տարում Քաջարանում տեղի է ունեցել սեփականության վերաբաշխում:

Ակնհայտ է դառնում, որ հիմա էլ սեփականության վերաբաշխումը շարունակվում է. հիմա էլ խլում են նրանցից, ովքեր ժամանակին խլել են սկզբնական սեփականատերերից:

Տեսեք՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի կապիտալի 100 տոկոս բաժնետոմսերի 60 տոկոսը տրվել է «Քրոնիմետ մայնինգ» ընկերությանը:

Հիմա հայտարարվում է, թե այդ ընկերությանը (ընկերությունների խմբին) պատկանում է ոչ թե բաժնետոմսերի 60 տոկոսը (ինչպես որոշել էր կառավարությունը 2004-ին), այլ 75 տոկոսը:

Այնուհետեւ՝ ընդունենք, որ բարի նպատակով ու օրինական ճանապարհով է կատարվել սեփականության վերաբաշխումը:

Դե ուրեմն եկեք բաց ճակատով հանրությանն ասենք՝ ա) ինչպե՞ս է 60 տոկոսը դարձել 75 տոկոս, բ) ո՞ւմ 15 տոկոս բաժինն է «Քրոնիմետը» վերցրել, գ) ի՞նչ եղանակով է վերցրել՝ վաճա՞ռք, նվիրատվությո՞ւն, ռեկե՞տ…

Մի պահ ընդունենք , որ ամեն ինչ օրինական ճանապարհով է կատարվել:

Դե ուրեմն եկեք հանրությանը բաց ճակատով ասենք՝ ովքե՞ր են «Քրոնիմետ մայնինգի» կամ «Քրոնիմետ» ընկերությունների խմբի սեփականատերերը, ովքե՞ր են, ի վերջո, տնօրինում Սյունիքի մարզի տնտեսության 80 տոկոսը:

Դե ուրեմն եկեք հանրությանը բաց ճակատով ասենք նաեւ՝ իսկ ո՞ւմ է պատկանում կոմբինատի բաժնետոմսերի մնացյալ 25 տոկոսը:

Ու քանի դեռ այդ ամենը չի գաղտնազերծվում, ստիպված ենք մեծարգո պարոն վարչապետին ուղղել սյունիքյան հանրությանը հետաքրքրող մի քանի հարց:

Ինչո՞ւ վարչապետին, որովհետեւ Հայաստանում չկա մի երկրորդ պաշտոնյա, ով կարող է պատասխանել պարզագույն այդ հարցերին:

Հարցերը՝ ստորեւ:

1.Ինչպե՞ս է Քաջարանի կոմբինատի 60 տոկոսի սեփականատեր «Քրոնիմետ մայնինգ» գերմանական ընկերությունը դարձել 75 տոկոսի սեփականատեր:

2.Ո՞ւմ սեփականությունն է (15 տոկոսի չափով) փոխանցվել «Քրոնիմետ մայնինգ» գերմանական ընկերությանը եւ ի՞նչ ճանապարհով:

3.Ովքե՞ր են «Քրոնիմետ մայնինգ» ընկերության սեփականատերերը կամ ո՞ր ընկերություններն են մտնում «Քրոնիմետ» ընկերությունների խմբի մեջ:

4.Տնտեսվարող ո՞ր սուբյեկտներն են ներկայումս տիրապետում Քաջարանի կոմբինատի մնացյալ 25 տոկոսին, ովքե՞ր են այդ սուբյեկտների սեփականատերերը, եւ ինչ ճանապարհով է սեփականությունը նախկին տերերից փոխանցվել նոր տերերին:

Սամվել Ալեքսանյան

Հոբելյան եւ խնդիրներ

2018թ. նոյեմբերի 26-ին՝ Գորիսի «Միհավ» հյուրանոցային համալիրի դահլիճում, կայացել է միջազգային կոնֆերանս՝ նվիրված արյունաբանության եւ փոխներարկաբանության կարեւորության խնդիրներին ու Հայաստանի հարավային տարածաշրջանը սպասարկող «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲ ընկերության հիմնադրման 50-ամյակին:

Գիտագործնական միջազգային կոնֆերանսին մասնակցել են գիտնականներ եւ ոլորտի մասնագետներ արտերկրից, Հայաստանի առողջապահության նախարարության «Պրոֆ.Ռուբեն Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ գիտնականների եւ մասնագետների պատվիրակությունը՝ հանրապետության գլխավոր արյունաբան, բժշկական գիտ. թեկ. Սամվել Դանիելյանի գլխավորությամբ:

Նրանք պատվոգրեր են հանձնել Գորիսի արյան փոխներարկման կայանի եւ իրավահաջորդ ընկերության՝ Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայանի երկարամյա եւ բեղմնավոր աշխատանքային գործունեություն ծավալած նախկին ու ներկա բուժաշխատողներին՝ արյան կայանի հիմնադրման 50-ամյակի առթիվ:

Հայաստանում արյունաբանության հիմնադիր, գիտության վաստակավոր գործիչ, նշանավոր վիրաբույժ եւ պրոֆեսոր Ռուբեն Յոլյանի հայրենիքում՝ Երեւանից ժամանած պատվիրակության ղեկավար, կոնֆերանսի նախագահ Սամվել Դանիելյանը հրապարակեց ոլորտի բարձր պարգեւով Ռ.Հ. Յոլյանի անվան հուշամեդալով «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ տնօրեն Արթուր Առաքելյանին պարգեւատրելու մասին, ինչին Արթուր Առաքելյանն արժանացել է մարզում արյան ծառայության զարգացման մեջ մեծ ավանդ ունենալու համար:

Բանախոսը հիշեցրեց, որ 1982թ. հունիսհուլիսին Լենինականի զինվորական զորամասում բժշկական ծառայության լեյտենանտի կոչում հայցող՝ «Երեւանի պետական բժշկական ինստիտուտի ուսանող Արթուր Առաքելյանը նույնն է մնացել առայսօր»:

Կոնֆերանսի մասնակիցների հոտնկայս ծափահարությունների ներքո ՀՀ առողջապահության նախարարության պետական պարգեւը Սամվել Դանիելյանը հանձնեց «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ տնօրեն, առողջապահության ճանաչված կազմակերպիչ, Շինուհայրի պատվավոր քաղաքացի Արթուր Առաքելյանին:

Դահլիճն այնքան բուռն արձագանքեց այս պարգեւատրմանը, որ թվաց, թե ավելի մեծ մի պարգեւ դեռ սպասում է հայրենական առողջապահության նվիրյալին: Մանավանդ որ այս տարի Սպիտակի երկրաշարժի 30-ամյակի տարելիցն է: 1988-89թթ. նա իրագործել էր աղետի գոտում համաճարակի բռնկման կանխարգելիչ հրաշքը: Չէ՞որ նման երկրաշարժից հետո, սովորաբար, ավելի մեծ մարդկային զոհեր է պատճառում պարտադիր համաճարակը: (1988թ դեկտեմբերի 8-ին Գորիսի շրջանային սանէպիդկայանի բժիշկ Արթուր Առաքելյանին՝ ընդամենը 29-ամյա բժշկին վստահվեց առանձնակի կարեւորության պետական խնդիրը: Բժշկական ծառայության լեյտենանտ Արթուր Առաքելյանը դարձավ Խորհրդային Հայաստանի քաղաքացիական պաշտպանության գնդում հատուկ հանձնարարված առաջադրանքի հուսալի իրականացման երաշխավորը եւ կատարողը: Նա նշանակվեց աղետի գոտու համաճարակային ծառայության պետ, նստավայրը՝ ք. Լենինական):

Այդ սխրանքի իրականացումը մնում է անվանի բժշկի մատուցած ներդրումների շարքում: Նոր Հայաստանում բժշկի վաստակը գուցեեւ արդար գնահատականի արժանանա:

Կոնֆերանսին մասնակցել են Սյունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական հաստատությունների տնօրեններ եւ փոխտնօրեններ, վիրաբույժներ, մանկաբարձ-գինեկոլոգներ, մանկաբույժներ, թերապեւտներ, նյարդաբաններ, անեսթեզիոլոգներ, բժիշկ-լաբորանտներ, լաբորանտներ, բուժքույրեր: Նրանք լսել են ներկայացված դասախոսությունների գիտաուսումնական ծրագիրը: Ոլորտի արդի պահանջների ներքո մասնագիտական սերտիֆիկատներ ստանալու համար ընդունվել են ներկայացված հայտերի հաշվառում՝ անձնակազմի մասնագիտական զարգացման գծով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնելու նպատակով:

Երեւանից ժամանած մասնագետներն ուսումնասիրել են «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲ ընկերության գործավարական փաստաթղթերը, այցելել են արյան բանկ, ծանոթացել արտակարգ իրավիճակների արյան բանկի անձեռնմխելի պաշարների համակազմին, որակյալ արտադրանքի ստեղծման մասնագիտական պայմաններին եւ անձնակազմի հմտություններին, շենքային պայմաններին ու ոլորտի սարքավորումների հնարավորություններին: Առանձնահատուկ գնահատական է ստացել դոնորական արյան վարակային անվտանգության ապահովման լաբորատոր հետազոտությունների իրականացման գործընթացը, մարզի համայնքներում՝ կամավոր արյան դոնորների քարոզչության շարունակական ծրագրերի կենսագործման եւ արյան դոնորի առողջության պահպանման նպատակով խնդիրների կարեւորությունը:

Հիվանդանոցային բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կենտրոնները պարտավոր են նախապես ունենալ արյան բաղադրամասերի՝ էրիթրոցիտար զանգվածի եւ պլազմայի պաշարներ, արյան դոնորներ ուղղորդել արյան փոխներարկման կայան կամ էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրով նախօրոք ձեռք բերել ու հիվանդանոցում պահեստավորել արյան բաղադրամասեր, ժամանակին՝ շտապ եւ անհետաձգելի փոխներարկումային բուժօգնության համար համաձայն կնքված պայմանագրերի:

Երեւանից ժամանած պատվիրակության մասնագետները Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ ներկայացրեցին եւ հրատապ լուծում պահանջող խնդիրների շարքում արձանագրեցին դոնորի եւ պատուհանների փոխարինումը, շենքի գազիֆիկացումը եւ նորոգումը (բացառությամբ տանիքի ծածկի), վերելակի մոնտաժումը՝ 3-րդ հարկում դոնորի արյունատվությունից հետո արյան դոնորին բակ անվտանգ տեղափոխելու համար: Բնակավայրերում դոնորական արյան արտագնա հավաքման համար նոր ավտոմեքենայի դեպքում՝ այն միաժամանակ հնարավորություն կտա Երեւան քաղաքում փոխանակվող արյան բաղադրամասերի տեղափոխման եւ լաբորատոր թեսթ-համակարգերի փոխադրման ժամանակ սառցային շղթայի ապահովման, թափոնների վնասազերծման կենտրոն տեղափոխման համար:

Խաչաձեւ ռոտորով ցենտրիֆուգա սարքի, -400C սառցարանների, ժամանակակից դոնորական բազկաթոռի, սառնարանների, բիոքիմիական անալիզատորի ձեռքբերումը համարվել են անհետաձգելի:

Կոնֆերանսի ծրագիրը՝ մարզային բժիշկների գիտագործնական ուսուցման, արյունաբանության եւ փոխներարկաբանության արդիական հարցերին նվիրված մեթոդական օգնություն էր:

Կոնֆերանսի նախագահ Սամվել Դանիելյանի հանդիսավոր բացման խոսքից հետո ելույթ ունեցավ «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ տնօրեն Արթուր Առաքելյանը: «Արյան փոխներարկման կայան. անցյալ, ներկա եւ զարգացման հնարավոր ուղիները» թեմայով զեկուցեց բժիշկ-լաբորանտ Ժասմեն Հայրապետյանը: Տեսաժապավենի վրա ցուցադրվեց բ.գ.դ., պրոֆեսոր Միհրան Նազարեթյանի դասախոսությունը (դոնորական արյան որակը եւ անվտանգությունը):

Այնուհետեւ ելույթ ունեցան Կազանի պետբժշկական ակադեմիայից բ.գ.թ. Ելենա Բելսկայան (արյան ծառայության կլինիկոախտորոշիչ լաբորատորիայի կազմակերպման փորձը), «Պրոֆ. Ռ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնից» բ.գ.թ. Նելլի Մուսայելյանը (փոխներարկաբանության

իմունաարյունաբանական խնդիրները), Մարինե Մելիք-Անդրեասյանը (սակավարյունությունների վաղ ախտորոշման եւ բուժման հիմնախնդիրները), բ.գ.թ. Հեղինե Խաչատրյանը (հեմոսթազի համակարգի դերը փոխներարկաբանության մեջ), Մոսկվայի օրտոկլինիկալ-դիագնոստիկա ընկերությունից կ.գ.թ. Իգոր Լոնինը (իմունաարյունաբանական լաբորատորիաների գործիքային ապահովման ժամանակակից պահանջները), Թբիլիսիից ժամանած մասնագետներ:

Գիտագործնական կոնֆերանսին հաջորդաբար նախագահել են կենսաբանական գիտ. դոկտոր, Նյու-Յորքի գիտությունների ակադեմիայի, էկոլոգիայի եւ կենսագործունեության անվտանգության ակադեմիայի, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիկոս, Երեւանի պետբժշկական համալսարանի պրոֆեսոր, արյունաբանական կենտրոնի տնօրենի գիտության գծով փոխտնօրեն Պետրոս Ղազարյանը, արյունաբանական կենտրոնի արյան ծառայության գծով փոխտնօրեն, բժշկական ծառայության փոխգնդապետ Մարգարիտա Հակոբյանը:

Կոնֆերանսին մասնակցել են գիտքարտուղար Լուսինե Սահակյանը, արյունաբանական կենտրոնի կազմբաժնի վարիչ Մարիամ Դանիելյանը, Արյան բանկի առաքման բաժնի վարիչ Արմինե Ստեփանյանը, «Կոտայքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ տնօրեն Թադեւոս Սեյրանյանը, բժիշկ-լաբորանտ Գայանե Գեւորգյանը, բժիշկ-ուռուցքաբան Դավիթ Զոհրաբյանը:

Կոնֆերանսին ներկա էին Սյունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական հիմնարկների տնօրեններ Լուսինե Վարդանյանը (Մեղրի), Լյուդմիլա Հարությունյանը (Բռնակոթ), Անիկ Գրիգորյանը (Անգեղակոթ), Շուշաննա Թեւանյանը (Շինուհայր), Ժակլին Ավետիսյանը (Տեղ), Կարինե Հարությունյանը (Գորիայք), Նատալյա Հակոբյանը (Վերիշեն), Աշոտ Թելունցը (Խնձորեսկ), Արմեն Ղահրամանյանը (Քաջարան), փոխտնօրեններ Լեւոն Հարությունյանը (Գորիս), Վարդուշ Թեւանյանը (Սիսիան), Արմեն Սաֆարյանը (Կապան), եւ Կապանի բժշկական կենտրոնում արյան ծառայության գծով ներկայացուցիչ Դոնարա Հախումյանը, ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման Սյունիքի տեսչությունից Լենա Մալինցյանը, հիվանդանոցներում աշխատող տասնյակ բժիշկներ՝ Սոնա Անտոնյանը, Ալվարդ Հայրապետյանը, Ռուզաննա Մարտիրոսյանը, Կարինե Յոլյանը, Լիլիա Մանուցյանը, Լիլիա Թադեւոսյանը, Սիրակ Սիրականյանը, Լուսինե Շահնազարյանը եւ ուրիշներ:

Կոնֆերանսի ավարտին՝ «Կոնցեռն էներգոմաշ» ֆիրմայի ներկայացուցիչը տեսաժապավենի վրա ներկայացրեց «Արյան կայանների ժամանակակից սարքավորումները» առաջարկությունների փաթեթը: Սակայն «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲ ընկերությունն այդ մատակարար կազմակերպությանը որեւէ առաջարկ չներկայացրեց, քանի որ ծախսատարության պատճառով երաշխիք չուներ, որ պատերազմի առաջնագիծը սպասարկող արյան կայանին օգնության ձեռք կմեկնեն խոշոր հարկ վճարող կազմակերպությունները:

Մեղրի-Արտաշատ տարածաշրջանում արյան փոխներարկման միակ կայանի նշված խնդիրների իրագործման համար մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունները տարիներ շարունակ չեն օժանդակել ազգային անվտանգության, ռազմավարական կարեւորագույն հիմնարկի մարդասիրական առաքելությանը:

Ունկնդիրներն ի գիտություն ընդունեցին վերջին տարիներին, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության դատապարտման ու զոհերի հիշատակի ոգեկոչման, մարդասիրական արժեքների հաստատման ուղղությամբ Արթուր Առաքելյանի քարոզչական գործունեությունը, ինչին քաղաքացիներն արձագանքել են դոնորային արյունատվությամբ:

Իսկ քառօրյա պատերազմի ժամանակ կամավոր, անվարձահատույց դոնորական արյուն հանձնած շուրջ 200 քաղաքացիների անվանական հիշատակումը կատարվել է Հայաստանի գրողների միության անդամ, բժիշկ Արթուր Առաքելյանի հեղինակած «Հետքեր երկրի վրա» անտիպ գրքում:

Հ.Գ.

Արթուր Առաքելյանին «Առողջապահություն եւ ստեղծագործություն» անվանակարգով հանձնվեց Շնորհակալագիր՝ ոլորտի պահպանման եւ հետագա զարգացման, Գորիսը 2018թ. ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաքի բարգավաճման մեծ ներդրումի համար, վավերացված՝ Աշխարհի ժողովուրդների հոգեւոր միասնության միջազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Գ.Ե. Տրապեզնիկովի կողմից:

«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ

Կորել է

Կապանի բժշկական ուսումնարանի 1991թ. շրջանավարտ Ալինա Պավլուշայի Հարությունյանի ՅՏ-012086 դիպլոմը, գրանցման համարը՝ 2442:
Համարել անվավեր:

ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն վարչության ստուգումների թիվ 14 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Հակոբ Գուրգենի Իսրայելյանի թիվ 1642 ծառայողական վկայականը՝ տրված ՀՀ ՊԵԿ-ի կողմից:
Համարել անվավեր:

Կապանի բժշկական քոլեջի 2018թ. շրջանավարտ Ինգա Լեռնիկի Հարությունյանի AR N 157428 համարի դիպլոմը:
Համարել անվավեր:

Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջի 2015 է. շրջանավարտ, Գարի Գրավիկի Աղաբեկյանի դիպլոմը՝ AR123178, տրված 02.02.2015թ.:
Պետական որակավորման հանձնաժողովի արձանագրություն թիվ 458, 08.12.2014թ.
Համարել անվավեր:

Նախաամանորի այց Արցախ. հեպադարձ հայացք

Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց մայր տաճար

էջ 5

փոփոխությունների մասին՝ բջջային հեռախոսից, «սկայպ» համակարգից օգտվելու հնարավորություն, զինվորին տրվող արձակուրդ, ազատ ժամանակի կազմակերպում, ծնող-զորամաս կապ, ֆիզիկական դաստիարակության նորացված պայմաններ…

Գեղամ Գրիգորյանն ու Արմեն Մկրտչյանը տեղեկություններ էին փոխանակում զորամասերում Ամանորի եւ Սուրբ ծննդի նախապատրաստման ընթացքի մասին, որն այս տարի առավել գրավիչ միջոցառումներով է հագեցած:

Մարտական դիրքեր տանող ճանապարհին, որ երկար ու ձիգ էր թվում, հասկանալի պատճառով, Գեղամ Գրիգորյանի ու Արմեն Մկրտչյանի հետ զրույցը հաճախ դուրս էր գալիս բանակային թեմայի շրջանակներից, թեեւ մեզանում դժվար թե գտնվի մի հարց, որ գոնե անուղղակի չառնչվի բանակին ու զինվորին:

Մի բանում վերստին համոզվեցինք՝ Պաշտպանության բանակի սպաները ոչ միայն քաջարի զինվորականներ են ու հայրենիքի նվիրյալներ, այլեւ մեր հոգեւոր-մշակութային կյանքի կրողներ…

Եվ դա կարեւոր է, քանզի չկա ու չի կարող լինել նոր Հայաստան, ինչպես եւ չկա ու չի կարող լինել հին Հայաստան, կա միայն մեկ Հայաստան՝ հոգեւոր Հայաստան, որի մերօրյա սահմանը սկսում է հայոց Արցախի արեւելյան եւ հյուսիսարեւելյան առաջնագծի մարտական դիրքերից…

Հարգելի Սենոր Հասրաթյան
Հարգելի Գեղամ Գրիգորյան
Հարգելի Արմեն Մկրտչյան

Ընդունեք մեր ջերմ շնորհավորանքը Նոր տարվա եւ Աստծո որդու ծննդյան օրվա կապակցությամբ:

Ձեզ՝ քաջառողջություն, անձնական երջանկություն եւ, իհարկե, բարեհաջող ծառայություն՝ ի փառս Հայոց Արցախի եւ Հայաստանի Հանրապետության:

Սամվել Ալեքսանյան

2019-ը Խոզի տարի է. ինչպիսի՞ն կլինի այն բոլոր նշանների համար

Արեւելյան աստղագուշակի համաձայն՝ 2019 թվականը Խոզի տարի է: Առասպելը վկայում է, որ Խոզը վերջինն էր, որ եկել էր Նոր տարվա տոնակատարությանը: Խոզն ավարտում է Արեւելյան աստղագուշակի 12-ամյա բոլորաշրջանը: Ի՞նչ է այն բերելու աստղագուշակի այլ նշանների համար:

Հոգատար եւ հեռանկարային տարի է բոլոր նշանների համար: Թուլանում է կարիքի եւ բացասականի հանգույցը: Վերադարձվում են պարտքերը, եկամուտ է գալիս եւ ընդհանրապես շնչելը դառնում է շատ ավելի հեշտ: Ավելի հեշտ է իրականություն դարձնել բոլոր անիրատեսական իղձերը: Ավելի հաճախ, քան նախորդ տարի, կլինեն դեպքեր, երբ կզգաք, որ գոհ եք կյանքից: Գիտության եւ արվեստի ծաղկման տարի է: Պետության եւ ընտանիքի ամրապնդման տարի:

Մուկ. կայունություն, որը վստահություն է առաջացնում վաղվա օրվա հանդեպ: Մեծ խնդիրների բացակայություն եւ հաջողություն:

Ցուլ. հաջող տարի է նրա համար: Նա շատ բարձունքների կարող է հասնել դիմացկունության եւ աշխատանքի շնորհիվ:

Վագր. եթե մի կողմ դնի զգացմունքայնությունը եւ սկսի առաջնորդվել մտածողությամբ, ապա կհասկանա, թե ինչ էր որսում ողջ անցյալ տարվա ընթացքում:

Նապաստակ. հստակ դասավորումներ, ամեն ինչ ընթանում է այնպես, ինչպես ծրագրավորվել է:

Վիշապ. այս տարին բոլոր չափանիշներով կլինի շատ ավելի լավը նախորդից:

Օձ. նրա համար ավելի լավ ժամանակներ են եղել: Հատուկ ուրախություններ չկան:

Ձի. կյանքի մակարդակի զգալի բարելավում, բայց բավականաչափ խնդիրներ կլինեն:

Այծ. ուրախանալու շատ առիթ կա, երջանկություն, սեր, գումար, հաջողություն:

Կապիկ. կսկսի շնչել ավելի հանգիստ: Մանեւրելու ավելի շատ տեղ կունենա: Ավելի շատ գումար եւ հարմարավետություն:



Աքաղաղ. կգնա ռիսկի, բայց հաջողված: Կհարստանա եւ ձեռք կբերի հեղինակություն: Վառ հետաքրքրություններ, անմոռանալի շրջագայություններ:

Շուն. շաքարե ոսկորները կպակասեն, բայց նա ձեռք կբերի նոր կապեր եւ կապվածություններ:

Խոզ. եկել է նրա ժամանակը, բոլոր փոփոխությունները բերելու են բարիք: Փող, հանրաճանաչություն, երջանկություն:

hayacq.com

Ի՞նչ սպասել 2019 թվականից. աստղագուշակ՝ կենդանակերպի բոլոր նշանների համար

Ահա՝ ինչ է սպասվում կենդանակերպի նշաններին 2019 թվականին՝ ըստ աստղագետ Անժելա Պերլի:

Խոյ

Խոզի տարին Խոյերի համար շատ բարենպաստ տարի է լինելու, եթե երեխա եք ուզում ունենալ, խոզի տարին համարվում է հաջող տարի: Խոյերը կյանքի բոլոր բնագավառներում հաղթանակներ կգրանցեն: Գարնանը մի շարք ծանոթություններ են սպասվում, ուշադիր եղեք ձեր կյանք մուտք գործած մարդկանց, նրանց մեջ է ձեր 2-րդ կեսը, իսկ եթե ամուսնացած եք, ընտանիքի հետ հարաբերություններն էլ ավելի կլավանան: Հնարավոր է նաեւ բնակության վայրի փոփոխություն:

Ցուլ

Շատ ակտիվ ու իրադարձություններով լի տարի է սպասվում: Եթե միայնակ եք, անպայման հանդիպելու եք ձեր 2-րդ կեսին, իսկ եթե ամուսնացած եք, ապա իսկական ժամանակն է երեխաների մասին մտածելու համար:

Երկվորյակ

Եթե միայնակ եք, ապա այս տարի ոչ միայն կհանդիպեք ձեր կեսին, այլեւ կամուսնանաք: Ծախսերի տարի է սպասվում, բայց աշխատած գումարը լրիվ կբավականացնի: Ուշադիր եղեք առողջության խնդրում, հետեւեք եւ յուրաքանչյուր գանգատի դեպքում դիմեք բժշկի:

Խեցգետին

«Կյանքը շարժում է». Սա է այս տարվա ձեր կարգախոսը: Աշխատանքային բազում հնարավորություններ կբացվեն ձեր առաջ, շանսը ոչ մի դեպքում բաց մի թողեք: Միայնակ Խեցգետինները երկրպագուների պակաս չեն զգա, բայց ընտրության հարցում մանրախնդիր եղեք:

Առյուծ

Առյուծների կյանքում լուրջ փոփոխություններ են սպասվում, բացառապես դրական: Եթե մինչ այս ձեր կյանքում բարդ շրջան է, ապա հիմա ամեն ինչ փոխվելու է: Հատկապես նկատելի փոփոխություններ են սպասվում անձնական կյանքում:

Կույս

Ինքնաարտահայտման ու ինքնադրսեւորման տարի է: Մինչ այս պահը դա ձեզ չէր հաջողվում: Հիմա եկել է ժամանակը, որ ձեր կատարած աշխատանքը ըստ արժանվույն վարձատրվի:

Անձնական կյանքում, սակայն, լուրջ փոփոխությունների մի սպասեք:

Կշեռք

Սպասեք լավ փոփոխությունների եւ անձնական կյանքում եւ գործնականում: Մի շարք գործնական հաջող առաջարկներ կստանաք: Հնարավոր են անշարժ գույքի հետ կապված հարցեր՝ վերանորոգում, տեղափոխություն:

Կարիճ

Կարիճների համար 2019-ը բացառապես հաջողությունների տարի է լինելու: Առաջին հերթին դուք ֆինանսական անկախություն ձեռք կբերեք, հաջողություններ կգրանցեք ուսման մեջ եւ աշխատանքում: Իսկ անձնական կյանքի մասին խոսելն ավելորդ է՝ այսպիսի հիշարժան տարի շատ քիչ կլինի:

Աղեղնավոր

Առողջության հետ կապված խնդիրներ չեք ունենա: Եթե ամուսնացած եք, բարենպաստ տարի է երեխաներ ունենալու համար: Իսկ եթե միայնակ եք, անպայման հանդիպելու եք ձեր 2-րդ կեսին: Չեն բացառվում նաեւ ճամփորդություններն ու շրջագայությունները:

Այծեղջյուր

Սա շատ լավ, կարելի է ասել ճակատագրական տարի է լինելու ձեզ համար: Մի վախեցեք այդ բառից: Ճակատագրական բառի տակ միայն դրական ենթատեքստ տեսեք: Սպասվում են ծանոթություններ, ամուսնութուններ, ուրախ առիթներ՝ ամբողջ տարին բարձր տրամադրությամբ անցկացնելու համար: Դե իսկ ամռանը՝ ճամփորդություն տաք ու էկզոտիկ երկիր:

Ջրհոս

Ֆինանսական որոշակի դժվարություններ են սպասվում, բայց դրանք թող ձեզ չվախեցնեն, քանի որ դուք կարող եք այդ պրոբլեմները վերացնել: Ուշադիր եղեք նաեւ ձեր սիրելիի հետ հարաբերություններում: Սովորեք լսել ոչ միայն ձեր սրտի ձայնը, այլեւ դիմացինների խորհուրդները:

Ձկներ

Հետեւեք ձեր առողջությանը, թեթեւակի գանգատի դեպքում անգամ դիմեք բժշկի: Ընկերական միջավայրի փոփոխություն է սպասվում, որն իր հետ միայն դրական փոփոխություններ կբերի:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 26.12.2018թ.: